Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օրաթերթ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

# Առավոտ

aravot daily

91/4187/ 17 մայիսի 2012 հինգշաբթի

ISSN 1829-2224

## Մի հավատացեք բառերին

Չեմ սիրում ինքս ինձնից մեջբերումներ անել՝ կուրծք ծեծելով, թե, ա՜խ, որքան ճիշտ կանխատեսում էի արել: Բայց այս անգամ չեմ դիմանում գայթակղությանը՝ ապրիլի 25-ի իմ նշումներում ես գրել էի. «Իսկ որ ընտրություններից հետո ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն դաշինք կկազմեն՝ չեմ կասկածում: Նույնիսկ գրազ չեմ գալիս զուտ մարդասիրական նկատառումներով՝ ինչո՞ւ օգտվեմ մարդկանց միամտությունից» (http://www.aravot.am/2012/04/25/63327/): Հիմա, երբ արդեն գրեթե 99 տոկոսով հստակ է, որ նախորդ գումարման կոալիցիան կպահպանվի հին ձեւով, պիտի նկատեմ, որ շատ մեծ մարգարե պետք չէր լինել՝ դա կանխագուշակելու համար: Պարզապես ուզում եմ խնդրել դյուրահավատ մարդկանց՝ հալած յուղի տեղ մի դրեք քաղաքական գործիչների խոսքերը՝ մանավանդ, եթե դրանք ասվում են ընտրություններից առաջ: Օրինակ՝ 2008 թվականին նախագահական ընտրություններից առաջ առաջին նախագահ եւ նախագահի թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանն ասում էր՝ եթե Սերժ Սարգսյանը զբաղեցնի նախագահի պաշտոնը, բոլոր օլիգարխները «բոմժ» կդառնան: 4 տարի հետո կարող ենք արձանագրել, որ ոչ Գագիկ Ծառուկյանը, ոչ Ռուբեն Հայրապետյանը, ոչ էլ Սամվել Ալեքսանյանը «բոմժ» չդարձան, հակառակը՝ բազմապատկեցին իրենց հարստությունը: Չգիտե՞ր առաջին նախագահը, որ ոչ մի բոմժացում էլ չի լինելու: Իհարկե, գիտեր: Բայց նրա ասածը, ինչպես այսօր ընդունված է ասել, «մեսիջ» էր՝ ես ձեզ ավելի լավ տիրություն կանեմ, քան իմ հակառակորդը: Օլիգարխներն այդ մեսիջին չհավատացին:

Կամ՝ նույն թվականի աշնանից կառավարությունն ասում էր՝ տեխնոպարկ, ֆինանսական կենտրոն, հարավ-հյուսիս ճանապարհ, նավթատար: 4 տարի անց պարզվեց, որ այդ ամենի «ցրցամը» նոր-նոր են տվել, եւ տեխնոպարկը ընդամենը մի քանի լաբորատորիա է, իսկ ֆինանսական կենտրոնը՝ ԿԲ-ի շենքի տեղափոխումը Դիլիջան: Իսկ ընդհանրապես այդ ամենին խանգարում է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը: Դե, վատ պարողին էլ են որոշ բաներ խանգարում: Բայց երբ կառավարության պաշտոնյաները նման բաներ էին ասում, նրանք, իհարկե, շատ լավ գիտեին, որ ոչ մի «տնտեսական հրաշք» չի լինելու: Պարզապես նրանց պետք էր որոշ ժամանակ զբաղեցնել մեր՝ քաղաքացիներիս ականջները կամ գուցե երեւակայությունը:

Ճիշտ նույն ձեւով երբ նախընտրական շրջանում տեղի ունեցավ առաջին եւ երկրորդ նախագահների անսպասելի մերձեցումը (վերջինս հանդես էր գալիս իր «պրոքսի»-ներով՝ Վարդան Օսկանյանով եւ Հմայակ Հովհաննիսյանով, եւ միայն քարոզչության նախավերջին օրը ելույթ ունեցավ անձամբ՝ քարոզելով ԲՀԿ-ի համար եւ ՀՀԿ-ի դեմ), դա ամենեւին չէր նշանակում, որ ընտրություններից հետո մերձեցումը կպահպանվի: Չի կարող պատահել, որ միեւնույն տնտեսական եւ քաղաքական նոմենկլատուրան ներկայացնող, նույն «ոճով» նույն աղբյուրներից օգտվող ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն հայտնվեին տարբեր ճամբարներում: Հայաստանում միայն մեկ անգամ է իշխանափոխություն տեղի ունեցել՝ 1998-ի պալատական հեղաշրջման տեսքով: Այդ պահին նրանք, ովքեր կորցնելու բան ունեին, միանգամից անցան նոր իշխանության կողմը, ընդդիմադիր դարձան հիմնականում նրանք, ում կյանքը դրա հետեւանքով էապես չբարդացավ: Հիմա նույնն է. ես զարմանում եմ, թե ինչի վրա էր ՀԱԿ-ը հույս դնում, երբ կարծում էր, թե ԲՀԿ-ն ընդդիմադիր կդառնա: Ընդդիմադիր ճառերո՞վ էր խաբվում:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

## «Աժ գնալը չի բացառում փողոցի տարբերակը»



«Հանրապետություն» կուսակցության նախագահ Արամ Սարգսյանի՝ ՀԱԿ-ից դուրս գալը անակնկալ է եղել ՀԱԿ ներկայացուցիչ, ՀԺԿ վարչության քարտուղար Ֆելիքս Խաչատրյանի համար. «Նա երբեւէ տարաձայնություններ չի ունեցել ՀԱԿ-ի հետ: Կարող է՝ մտքում մի բան է մտածել, բայց իր արտաքին պահվածքով դա չէր երեւում»: Պարոն Խաչատրյանը խոստովանեց, որ ՀԱԿ-ի ներսում մանդատ վերցնել-չվերցնելու շուրջ խնդիրներ են եղել. մի քանի հոգի չեն համաձայնվել. «Ես անձամբ մանդատ չվերցնելը ճիշտ չեմ համարում, դա խռովկանություն է, վերջիվերջո պետք է մանդատն օգտագործել: Փողոցի տարբերակը Աժ գնալը չի բացառում, Ազգային ժողովն ավելի ազդեցիկ ամբիոն է»: Ֆելիքս Խաչատրյանը վստահ է, որ ԲՀԿ-ն Սերժ Սարգսյանին չի պաշտպանի. «Երբ կլինի նման բան, այդ ժամանակ կպարզվի: Ո՞նց կարող է ՀԱԿ-ը մի ուժի հետ համագործակցել, որը կպաշտպանի Սերժ Սարգսյանին, դա բացառվում է»: Մեր դիտարկմանը, որ նման խոստում արդեն տվել է Գագիկ Ծառուկյանը՝ նա պատասխանեց. «Այնքա՜ն խոստումներ են տալիս, կերեւա, շատ քիչ մնաց»:

## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Ծրագրված սցենա՞ր

«Այլեւս հանրահայտ է, որ ծագումով սիսիանցի Թաթուլ Հակոբյանին ապօրինաբար ՀՀ Աժ պատգամավորության թեկնածու գրանցելու իրողությունը, ըստ ծրագրված սցենարի, ծառայեցվել է հատկապես Սիսիանի տարածաշրջանի ընտրողների շրջանում ունեցածս բարձր վարկանիշը չեզոքացնելու, իմ օգտին տրվելիք ձայները տրոհելու եւ Աժ պատգամավոր ընտրվելու հնարավորությունս բացառելու նպատակին»,- ասված է թիվ 37 ընտրատարածքում պատգամավորության թեկնածու առաջադրված Սամվել Հարությունյանի՝ երեկ ՍԴ ներկայացրած հայցադիմումում:

Կարդացեք էջ**D**3:

### «Սա այդ դեղը չէ»

«Զարմանալի է, որ մարդը մտածում է ու իրեն իրավունք է վերապահում Տեր-Պետրոսյանին դիտողություն անելու կամ պահանջելու»,- Aravot.am-ի հետ զրույցում Ռուբեն Թորոսյանի հայտարարությունն այսպես մեկնաբանեց ՍԴՀԿ ատենապետ Լյուդմիլա Սարգսյանը: Ինչպես տեղեկացրել ենք, ՀԱԿ անդամ, «Մարդու իրավունքներ-96» կուսակցության նախագահ Ռուբեն Թորոսյանը «Անսկզբունքային գործիչների եւ պրոֆիլի ընտրության մասին» հայտարարություն էր տարածել եւ նշել, որ պետք է դնել Տեր-Պետրոսյանին ՀԱԿ-ից հեռացնելու հարցը: Լյուդմիլա Սարգսյանը նշեց. «Սա այդ դեղը չէ: Ես չեմ կիսում Ռուբեն Թորոսյանի կարծիքը: Եթե այսօր ՀԱԿ-ը կա որպես միավոր, դա նախեւառաջ Լեւոն Տեր-Պետրոսյանի արժանիքն է»:

Կարդացեք նաեւ էջ 3:

### 4-ը դիմեցին Սահմանադրական դատարան

ՀՀ Սահմանադրական դատարանի մամուլի պատասխանատու Հովհաննես Պապիկյանը հաստատեց այն տեղեկատվությունը, ըստ որի՝ ՍԴ են դիմել Աժ մեծամասնական ընտրակարգով պատգամավորության թեկնածու առաջադրված Սամվել Հարությունյանը (37 ընտրատարածք), Նիկոլ Փաշինյանը (7-րդ ընտրատարածք), Մանուել Գասպարյանը (3-րդ) եւ 9-րդ ընտրատարածքից՝ Լեւոն Զուրաբյանը: Երեկ ընտրախախտումները վիճարկելու համար ՍԴ դիմելու վերջին օրն էր: Հիշեցնենք, որ Սամվել Հարությունյանը ստացել էր 1492 ձայն (հաղթողը՝ 19 894), Մանուել Գասպարյանը՝ 5100 (հաղթողը՝ 14 300), Նիկոլ Փաշինյանը՝ 9500 (հաղթողը՝ 19 800) եւ Լեւոն Զուրաբյանը՝ 4290 (հաղթողը 12 522) ձայն:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Ասուլիս

Այսօր, ժամը 12-ին, «Հենարան» մամուլի ակումբի հյուրն է Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի նախագահ Աշոտ Մելիքյանը:

### Եղանակ

Երեւան +13 +26, Շիրակ +3 +18, Կոտայք +3 +18, Գեղարքունիք +3 +18, Լոռի +6 +20, Տավուշ +8 +23, Արագածոտն լեռներ +3 +18, Արագածոտն նախալեռն. 10 +25, Արարատ +12 +27, Արմավիր +12 +27, Վայոց Ձոր լեռներ +3 +18, Վայոց Ձոր նախալեռն. +12 +27, Սյունիքի հովիտներ +10 +27, Սյունիքի նախալեռներ +5 +20
,

## «Քաղաքական դաշտի առաջին ջութակը կմնա ՀՀԿ-ն»



«Կոալիցիա կձեւավորվի, թե ոչ, ԲՀԿ-ն կլինի կոալիցիայում, թե չի լինի՝ դա մեծապես կախված է իշխող քաղաքական ուժի դիրքորոշումից, որովհետեւ իշխող քաղաքական կուսակցությունն է մեծամասնություն ստացել, եւ նա պետք է քննարկի, թե ինչպիսի կառավարում կլինի առաջիկա 5 տարիների համար՝ կոալիցիոն, թե ոչ կոալիցիոն»,- Henaran.am-ի խնդրանքով մեկնաբանելով ԲՀԿ-ական Նաիրա Զոհրաբյանի՝ երեկ տարածած հայտարարությունը, ասաց ՀՀԿ խոսնակ Էդուարդ Շարմազանովը:

Հիշեցնենք, որ իր հայտարարության մեջ Նաիրա Զոհրաբյանն անդրադարձել է նոր կոալիցիայի ստեղծման հարցին:

Շարմազանովը նշեց, որ ՀՀԿ-ն կոալիցիայի ստեղծման հարցը դեռ չի քննարկել: «Համոզված եմ, որ կուսակցությունը կընտրի այն ճանապարհը, որը բխում է մեր պետության ու հասարակության շահերից»:

Henaran.am-ի դիտարկմանը, թե ԲՀԿ-ական պատգամավորի հայտարարության այն հատվածը, որտեղ նշվում է, որ «մի քանի նախարար ավել կամ պակաս ունենալ կամ չունենալը ԲՀԿ-ի համար որեւէ նշանակություն չունի», իր մեջ որոշակի ուլտիմատում է պարունակում, Էդուարդ Շարմազանովն արձագանքեց.

«Չեմ կարծում, որ Հայաստանում այնքան միամիտ գործիչներ կան, որ պատրաստ են Հանրապետականի հետ խոսել ուլտիմատումներով: Կարծում եմ՝ բոլորն էլ գիտեն, որ Հանրապետականի հետ ուլտիմատումներով խոսելն անշնորհակալ, անթույլատրելի եւ ոչ կոռեկտ գործ է: Չեմ կարծում, որ իմ գործընկերը ուլտիմատումով է խոսել, բայց մի բան հաստատ կարող եմ ասել, որ անկախ նրանից՝ ԲՀԿ-ն կլինի կոալիցիայում, թե ոչ, Հայաստանի քաղաքական դաշտի առաջին ջութակը կմնա Հայաստանի Հանրապետական կուսակցությունը»:

Այս ամենով հանդերձ՝ արդյոք Զոհրաբյանի հայտարարությունը չի՞ նշանակում, որ ԲՀԿ-ն փորձում է մեկնաբանել կոալիցիա կազմելու իր հակվածությունը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ավելի վաղ նույն գործիչը հայտարարել էր, որ նոր կոալիցիայի ձեւավորումը նպատակահարմար չի համարում, եւ նշել էր՝ ճիշտ կլինի, եթե քաղաքական մեծամասնությունն ստանձնի ողջ պատասխանատվությունը:

Henaran.am-ի այս դիտարկմանը Էդուարդ Շարմազանովը պատասխանեց. «Քանի դեռ մեր կուսակցությունում հարցը չի քննարկվել, ես կոռեկտ չեմ համարում այլ քաղաքական կուսակցությունների բացատրություններին կամ արդարացումներին գնահատական տալ, մանավանդ, որ այդ կարծիքը չի հայտարարել նրանց կուսակցության ղեկավարը, իսկ ինձ համար պաշտոնական է կոնկրետ ԲՀԿ ղեկավարի եւ կուսակցության խոսնակի հայտարարությունը, որոնք առայժմ կոալիցիայի հետ կապված հրապարակային հայտարարությամբ հանդես չեն եկել»:

# Կոալիցիայի կազմը կմնա անփոփոխ

**ՀՀԿ խմբակցության քարտուղար Գագիկ Մելիքյանի համոզմամբ՝ քաղաքական կոալիցիան անհրաժեշտ է երկրում կայունության ապահովման համար, մինչդեռ «Նոր ժամանակներ» կուսակցության առաջնորդ Արամ Կարապետյանի համար ՀՀԿ-ի՝ կոալիցիա կազմելու պատրաստակամությունն անհասկանալի է: Քաղաքական գործիչների «Դեմ առ դեմ» առցանց բանավեճն ամբողջությամբ կարող եք դիտել aravot.am կայքում:**





«Առավոտ»- Նոր քաղաքական կոալիցիայի ձեւավորման հետ կապված մինչ օրս հստակ չէ ոչ միայն այն, թե ԲՀԿ-ն պատրա՞ստ է ընդունել ՀՀԿ-ի առաջարկը, այլեւ այն, թե նման առաջարկ առհասարակ եղե՞լ է: Պարոն Մելիքյան, ի վերջո ՀՀԿ-ն ԲՀԿ-ին կոալիցիա ձեւավորելու առաջարկ արե՞լ է:

Գագիկ Մելիքյան- Կազմելով բացարձակ մեծամասնություն՝ Հանրապետական կուսակցությունն ասել է, որ ինքը կողմնակից է կոալիցիոն իշխանություն ձեւավորելուն՝ առանձին առաջարկություններ չանելով որեւէ քաղաքական ուժի: Բոլոր այն քաղաքական ուժերը, որոնք կցանկանան Հանրապետականի հետ ձեւավորել կոալիցիա, նրանց ճանապարհը բաց է, եւ այդ քաղաքական ուժերն իրենք պետք է հայտարարեն՝ ցանկանո՞ւմ են ՀՀԿ-ի հետ ձեւավորել կոալիցիա, թե՞ ոչ:

«Առավոտ»- Պարոն Կարապետյան, Ձեր գնահատմամբ՝ այսօր քաղաքական կոալիցիայի ձեւավորումը ո՞ւմ է ավելի շատ պետք՝ ՀՀԿ-ի՞ն, թե՞ ԲՀԿ-ին:

Արամ Կարապետյան- Ես կարծում եմ՝ այս պահին հայ ժողովրդի համար առանձնապես հետաքրքիր չէ՝ կկազմվի՞ կոալիցիա, թե՞ ոչ, քանի որ դա ոչինչ չի փոխելու մեր կյանքում: Ի վերջո 5 տարի այդ կոալիցիան կար: Ընդհանրապես մի քիչ դժվար եմ հասկանում, թե այդպես շեշտակի հաղթած ուժը ինչո՞ւ է ուզում կոալիցիա կազմել: Զուտ քաղաքագիտական առումով դա դժվար է բացատրել:

Գ. Մելիքյան- Դա քաղաքական մշակույթ է, ես չեմ ասում, որ դա պարտադիր է, բայց ցանկալի է: Եվ եթե մենք գնում ենք քաղաքական հանդուրժողականության ճանապարհով, ապա կոալիցիայի ձեւավորման ամենակարեւոր նպատակներից մեկն է երկրում քաղաքական կայունության ապահովումը, որից կշահի ոչ միայն իշխանությունը, այլեւ ժողովուրդը:

«Առավոտ»- Իսկ եթե ի դեմս ԲՀԿ-ի՝ ԱԺ-ում ձեւավորվի քաղաքական լուրջ հակակշիռ, որը կլինի կառուցողական դաշտում, մի՞թե դա որեւէ կերպ կվտանգի երկրի կայունությունը:

Գ. Մելիքյան- Հակակշիռներով եւ հակազդեցություններով, կարծում եմ, կայունության չենք կարող հասնել: Միեւնույն ժամանակ, սա դեռեւս այն չէ, որ մենք հակակշիռ չունենք: Քննադատությունը կարող է լինել հենց մեր՝ կոալիցիայի ներսում: Քարոզչության ընթացքում մենք դրա ականատեսը եղանք եւ ԱԺ-ում էլ մենք դա տեսել ենք բազմաթիվ անգամ:

Ա. Կարապետյան- Այս պարագայում քաղաքականացված խորհրդարանում պետք է լիներ մասնագիտացված կառավարություն: Այսինքն՝ մասնագետներ, որոնք քաղաքական դեմքեր եւ որեւէ կուսակցության անդամ չեն: Այդ դեպքում հասկանալի կլիներ շարունակական տրամաբանությունը: Մինչդեռ Հայաստանում կոալիցիաները իշխանության չափաբաժինների խնդիր ունեն, կարեւորն այն է, թե ով ինչքան իշխանություն ունի: Բայց Սերժ Սարգսյանի եւ արդեն 14 տարի իշխանության մեջ գտնվող Հանրապետական կուսակցության հիմնական խնդիրն այն չէ, որ որեւէ քաղաքական ուժ «կողմ ըլլալով՝ դեմ է»: Մենք ընտրությունների ընթացքում ամեն անգամ տեսնում ենք, որ ինչ-որ քաղաքական ուժ, որն ամբողջությամբ պատասխանատու է տվյալ ընթացքի համար, բարձրանում է եւ սկսում շատ սուր քննադատել իր իսկ արածը՝ թիրախ ընտրելով Հանրապետական կուսակցությանը եւ անգամ վարկաբեկիչ հայտարարությունների հասնում, սակայն հետո՝ վերջում, էլի գալիս-դառնում է կոալիցիայի անդամ: Անհասկանալի է, թե սա ինչ քաղաքական մշակույթ է: Եվ այն պահից, երբ Սերժ Սարգսյանը իրապես կհասկանա, որ ոչ թե քաղաքական ուժերը եւ նույնիսկ ոչ թե հասարակությունն է ընդդիմադիր իրենց գործունեությանը, այլ Հայաստանում եւ աշխարհում ստեղծված իրավիճակն է ընդդիմադիր այն կուրսին, որը տանում է նա եւ Հանրապետականը, այ, դա կլինի կարեւոր՝ փոփոխություններ անելու եւ իրավիճակից դուրս գալու համար: Իսկ այս պահին, թե ով ինչ չափաբաժին կունենա իշխանական կոալիցիայում, էական չէ: Ի՞նչ տարբերություն՝ 5 նախարա՞ր կունենա ԲՀԿ-ն, 6, թե՞ 7: Առավել եւս, որ կրկնում եմ՝ անհասկանալի է, թե ինչ քաղաքագիտական տրամաբանությամբ է հաղթող ուժը կոալիցիա կազմելու ԲՀԿ-ի հետ՝ այն քննադատությունից հետո, որը հնչեց այս ընթացքում:

«Առավոտ»- Կոալիցիա կազմելու պատրաստակամությունը նշանակո՞ւմ է, որ ՀՀԿ-ն պատրաստ է մոռացության տալ վերջին ամիսներին ԲՀԿ-ի հնչեցրած սուր քննադատությունը:

Գ. Մելիքյան- Հաղթած Հանրապետական կուսակցության համար միշտ էլ կարեւորագույնը եղել եւ մնում է ժողովրդի կենսամակարդակի բարձրացումն ու երկրի տնտեսության զարգացումը: Թե քաղաքական որ ուժերի հետ, կոալիցիայի ինչպիսի կազմով Հանրապետականը դա կանի՝ այնքան էլ կարեւոր չէ: Կարեւորն այն է, որ ժողովրդի կենսամակարդակը բարձրացվի, աղքատության շեմը նվազեցվի, տնտեսությունը զարգանա, եւ արտագաղթը դադարեցվի: Սրանք են այն կարեւոր նպատակները, որոնք ՀՀԿ-ն դրել է իր առջեւ:

«Առավոտ»- Ի վերջո, Ձեր կանխատեսմամբ, ՀՀԿ-ԲՀԿ կոալիցիա կձեւավորվի՞, թե՞ ոչ:

Ա. Կարապետյան- Այդ հարցի պատասխանը կախված է Սերժ Սարգսյանի մոսկովյան այցից: Իմ տեղեկություններով՝ կոալիցիան անպայման կձեւավորվի, եւ այն անպայման կլինի ՀՀԿ-ԲՀԿ-ՕԵԿ ֆորմատով: Չի փոխվի նաեւ վարչապետը:

Գ. Մելիքյան- Շատ ցանկալի է, որ առաջիկայում ՀՀԿ-ԲՀԿ-ՕԵԿ կոալիցիան պահպանվի, դա է մեր ցանկությունը, եւ ես կարծում եմ, որ այն կիրականանա:

Բանավեճը վարեց
ԱՐԵՎԻԿ ՍԱՀԱԿՅԱՆԸ

Նախագիծն իրականացվում է «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» ծրագրի շրջանակներում:

# ԱԺ ընտրությունները՝ «9-րդ ձեւի» մոդելով

Երեկ «Սիվիլիթաս» հիմնադրամի կազմակերպած «Ընտրամարտ-2012» բանավեճերի շարքի վերջին հաղորդման ժամանակ լրագրող Հարություն Հարությունյանը ԱԺ ընտրությունների մասին ասաց. «Սա նոր մոդել է ամբողջ աշխարհի համար՝ որքան ժողովուրդն ավելի վատ է ապրում, այնքան ավելի շատ ձայն է տալիս իշխանություններին: Ամբողջ աշխարհում հակառակն է»:




Նա նաեւ նկատեց, որ Հայաստանում ներդրվել էր ընտրությունների կեղծման նոր մոդել. «2012-ի ընտրությունների մոդելը մեր հասարակության համար լրիվ նոր մոդել էր՝ «9-րդ ձեւի մոդելը». լրիվ նոր տեխնոլոգիաներ կիրառվեցին՝ լցոնումներ չկային, «կարուսելը» շատ քիչ էր, ամբողջը «9-րդ ձեւի» շնորհիվ էր՝ տասնյակ հազարավոր մարդկանց «9-րդ ձեւ» տեղեկանքը տվեցին, եւ նրանք քվեարկեցին, այսինքն՝ սա լցոնումների մի նոր, ավելի քաղաքակիրթ ձեւ էր: Եվ այս ձեւով իրենց ուզածն արեցին՝ ասվել էր, որոշվել էր, որ վեց կուսակցություն պետք է մտնի ԱԺ, վեցի համար արեցին: Պետք լիներ, որ ինը կուսակցություն մտներ՝ իննին կմտցնեին: Ասվեր՝ երեքը պետք է մտնեն, երեքը կմտնեին...»:

Նա նկատեց, որ «ժողովուրդը սոված է». «Ժողովուրդը հացի փող չունի: Ժողովուրդը գնում՝ կանգնում էր ընդդիմության միտինգներին, ընդդիմության հետ իշխանություններին ինչ ասես՝ չէր ասում, գոռում էր՝ ձեր դուխին մեռնեմ, ձեր ցավը տանեմ, բայց հաջորդ օրը գնաց ընտրությունների, հերթ կանգնեց, իր բաժին փողը վերցրեց եւ «ընտրեց» իշխանություններին...»:

Հեռուստալրագրող Դերենիկ Մալխասյանը, սակայն, կարծում էր, որ «ծախված», «կաշառված» ժողովրդի իմիջը իշխանությունները հատուկ են ստեղծել. «Իրականում իշխանությունները ավելի շատ ոչ թե ընտրակաշառքի, այլ ընտրացուցակների միջոցով են կեղծել: Երեք հազար ակտիվիստով նրանք երեք հարյուր հազար ձայն են ապահովել: Իսկ «ծախվող ժողովրդի» մոդելը դրել են շրջանառության մեջ՝ շիրման ապահովելու եւ իրենց խոսելու տեղ թողնելու համար, որ ասեն՝ ծախվել եք, դե, լռեք...»:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Առավոտ aravot daily
ՀԻՆԳՇԱԲԹԻ 17.05.2012

# «Ժամանակն է, որ Հայաստանում քաղաքական ախոռները մաքրվեն»

## ՀԱԿ-ի նախկին անդամը ՀԱԿ-ին մեղադրում է իշխանության հետ գործարքի գնալու մեջ




Խորհրդարանական ընտրություններից առաջ ռազմավարական եւ մարտավարական տարաձայնությունների պատճառով Հայ ազգային կոնգրեսը լքած «Հայ կամավորականների համախմբում» նախաձեռնությունը ՀԱԿ քաղխորհրդում ներկայացնող 1992-94 թվականներին Գորիսի քաղաքապետ Սամվել Հարությունյանը, ով մեծամասնական ընտրակարգով առաջադրվել էր Սյունիքի թիվ 37 ընտրատարածքում, երեկ դիմել է Սահմանադրական դատարան՝ վիճարկելով մայիսի 6-ին տեղի ունեցած ընտրությունների օրինականությունը: Այս ընտրություններում Սամվել Հարությունյանի օգտին արձանագրվել է 1492 ձայն՝ մոտ հնն անգամ պակաս, քան 2007-ի խորհրդարանական ընտրություններում: Սամվել Հարությունյանը համոզված է, որ շատ տեղամասերում, արդյունքների ամփոփումից հետո, արձանագրություններ են կեղծվել, իր օգտին տրված ձայների մի մասն էլ գրվել է ոչ միայն ՀՀԿ թեկնածու Հայկ Գրիգորյանի եւ առողջապահության նախկին փոխնախարար Թաթուլ Հակոբյանի, այլեւ ՀԱԿ թեկնածու, իր նախկին տեղակալ Վարազդատ Վարդազարյանի օգտին: «Ինչպես կարծում էի, նաեւ նրա թեկնածությունն է օգտագործվել իմ ձայները պակասեցնելու, դիրքերը թուլացնելու, պատգամավոր ընտրվելու հնարավորությունս բացառելու համար, եւ այդ տեսակետից որեւէ քննադատության չի դիմանում ՀԱԿ-ի ղեկավարության դիրքորոշումը: Այդ եւ բազմաթիվ այլ փաստեր հաշվի առնելով՝ գտնում եմ, որ ՀԱԿ-ի ղեկավարությունն ուղղակիորեն գործարքի մեջ է մտել իշխող ուժի հետ, եւ նրա ստացած արդյունքը՝ 7,01 տոկոս, հենց դրա վկայությունն է: Ես ափշում եմ. համաժողովրդական շարժման փայլուն ընթացքից, հատկապես 2007-ի աշնանից մինչեւ 2008-ի գարուն՝ այդ բարձրակետից հետո, ըստ էության ամեն ինչ արվել է, որպեսզի համաժողովրդական շարժումը տկարանա, թուլանա, մարի: Այս տեսակետից գտնում եմ, որ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանը, ըստ ամենայնի, 2008-ի մարտի 1-ից հետո շանթի փոխարեն կատարել է շանթարգելի դերակատարություն, եւ չեմ կարող Պարույր Սեւակի մի շատ կարեւոր նախադասություն չուղղել առաջին նախագահին՝ «Մի՞թե Աստվածները մեզ նրա համար են վեր բարձրացնում եւ հասցնում երջանկության կատարներին, որպեսզի այնտեղից գլորելով չափեն անդունդը մեր անկման»: Ահարոն Ադիբեկյանի տրված տոկոսներով ՀԱԿ-ը պետք է 10 մանդատ ունենար խորհրդարանում. մեկ մանդատ մարտիմեկյան ամեն մի զոհի փոխարեն: Բայց ՀԱԿ-ի վարկանիշն այնքան ընկավ իր տխրահռչակ ռազմավարության եւ մարտավարության պատճառով, որ 8,5 տոկոս էլ չկարողացան հավաքել, այլ իշխող ուժի կողմից, ըստ ամենայնի, մեծահոգաբար նվեր տրվեցին տոկոսներ՝ ՀԱԿ-ին սահմանագծին պահելու համար: Ես կարծում եմ՝ ժամանակն է, որ Հայաստանում քաղաքական ախոռները մաքրվեն»,- «Առավոտի» հետ զրույցում ասաց Սամվել Հարությունյանը:

Ի պատասխան այս մեղադրանքների՝ թիվ 37 ընտրատարածքում ՀԱԿ-ի կողմից առաջադրված պատգամավորության թեկնածու, բայց ՀԱԿ-ին չանդամակցող, երբեւէ որեւէ հանրահավաքի չմասնակցած, Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի ամբիոնի վարիչ Վարազդատ Վարդազարյանն «Առավոտին» ասաց. «Ինձ համար անհասկանալի եւ պարզապես ծիծաղելի է դա: Իրականության հետ ոչ մի կապ չունեցող դատողություն է, ես իշխանությունից այնքա՞ն հեռու եմ»: Ավելին Վարազդատ Վարդազարյանը կասին իրեն՝ Սամվել Հարությունյանին, դեմ առ դեմ:

Ինչ մնում է ՍԴ ներկայացրած դիմումին՝ Սամվել Հարությունյանը փաստեր է ներկայացնում նախընտրական եւ ընտրությունների շրջանում քարոզչության, պետական լծակների՝ ՀՀԿ-ի օգտին կիրառման, ՀՀԿ-ի եւ նրա թեկնածու Հայկ Գրիգորյանի օգտին մեկ ձայնի դիմաց բաժանված 20 հազար դրամ ընտրակաշառքի ու դրանց վերաբերյալ թիվ 37 ԸԸՀ-ի անգործության, անհետացող թանաքների եւ «կարուսելի», ուռճացված ցուցակների վերաբերյալ: Նրա հիմնական «խաղաքարտը», սակայն, այն է, որ ընտրական գործընթացն ի սկզբանե կազմակերպվել է օրենքի խախտումով՝ մասնավորաբար իբրեւ պատգամավորության թեկնածու գրանցելով առողջապահության նախկին փոխնախարար Թաթուլ Հակոբյանին: Հիշեցնենք, որ վերջինս տեւական ժամանակ աշխատում է Առողջապահության համաշխարհային կազմակերպությունում եւ բնակվում է Դանիայի Թագավորությունում: Մինչդեռ ՀՀ Սահմանադրությունը պահանջում է, որ ընտրություններին իբրեւ թեկնածու մասնակցող ՀՀ քաղաքացիները վերջին հինգ տարիներին մշտապես բնակված լինեն Հայաստանում: Այս հարցը Սամվել Հարությունյանը դեռ նախընտրական շրջանում վիճարկեց, սակայն ՀՀ անձնագրային եւ վիզաների վարչությունը երկու անգամ մերժեց Սամվել Հարությունյանի դիմումը՝ անվավեր ճանաչելու նույն վարչության Երեւան քաղաքի Նոր Նորքի բաժանմունքի կողմից Թաթուլ Հակոբյանին տրված՝ վերջին հինգ տարիներին ՀՀ-ում մշտապես բնակության մասին տեղեկանքը: Ավելի ուշ ՀՀ վարչական դատարանն էլ մերժեց Սամվել Հարությունյանի՝ թիվ 37 ԸԸՀ-ի որոշումը՝ Թաթուլ Հակոբյանին պատգամավորության թեկնածու գրանցելու մասին, անգամ չանդրադառնալով Թաթուլ Հակոբյանին տրամադրված տեղեկանքում առկա տեղեկությունների արժանահավատության հարցին:

Ավելի ուշ Aravot.am-ին տված հարցազրույցում Սամվել Հարությունյանը կարծիք էր հայտնել, որ Սյունիքում տարածված կարծիք կա, թե Թաթուլ Հակոբյանին «խաղի մեջ» է մտցրել ՀՀ նախագահի եղբայրը՝ Սաշիկ Սարգսյանը, Հարությունյանից «ձայներ խլելու համար»:

Ինքը՝ Սամվել Հարությունյանը, համոզված է, որ Թաթուլ Հակոբյանի գրանցումը եւ «տեղայնամոլական ախտի շահարկումը» էապես ազդել են ընտրությունների արդյունքների վրա: Մեր զրուցակիցը հատկանշական է համարում նաեւ այն, որ Սյունիքի տխրահռչակ մարզպետ Սուրիկ Խաչատրյանը քարոզչության վերջին օրը Սիսիան քաղաքի հրապարակում կազմակերպված համերգի ընթացքում հարթակ է բարձրացել եւ սիսիանցիներին դիմել վիրավորական հայտարարությամբ. «Քարանձավից դուրս եք եկել՝ Թաթո՞ւլ եք խաղացնում»: Այն, որ իր մնացյալ բոլոր հանդիպումների ժամանակ Սուրիկ Խաչատրյանը իր թեկնածուի գովազդով զբաղվելու փոխարեն Սամվել Հարությունյանի հակագովազդով է զբաղվել՝ հենց վերջինիս համարելով իրեն հիմնական մրցակից, իսկ Սիսիանում նման հայտարարություն է արել, Սամվել Հարությունյանին հիմք է տալիս ասելու, որ. «Սիսիանցիների մոտ իմ նկատմամբ ատելություն խորացնելու եւ նրանց ուղղորդելու՝ քվեարկել Թաթուլ Հակոբյանի օգտին, տրոհելով այն բազմահազար ձայները, որոնք ես ակնկալում էի ստանալ Սիսիանում»: Վերլուծելով Թաթուլ Հակոբյանի հետընտրական հարցազրույցները, որոնցում նա համոզմունք է հայտնում, որ թիվ 37-ում տեղի ունեցած ապօրինությունների եւ վայրի կամայականությունների համար մեղավորն ու պատասխանատուն ՀՀԿ-ն չէ, միայն Սուրիկ Խաչատրյանն է, Սամվել Հարությունյանը ենթադրում է. «Նա իր ծառայության դիմաց պետական պաշտոն է ակնկալում, եւ շատ հավանական է, որ շուտով այն կստանա»:

Սամվել Հարությունյանի՝ ՍԴ դիմելու առիթով արդեն իսկ Դանիայի Թագավորություն մեկնած առողջապահության նախկին փոխնախարար Թաթուլ Հակոբյանն «Առավոտին» փոխանցեց. «Ես եւ նախընտրական, եւ հետընտրական շրջաններում խուսափել եմ մամուլում անդրադառնալ որեւէ կուսակցությանը կամ անհատի գործունեությանը: Սամվել Հարությունյանի նկրտումները ի սկզբանե ինձ հասկանալի էին՝ մարդուն հանգրվան է պետք եւ հոգեբանի աջակցություն: Ես պատրաստ եմ նրան աջակցել, սակայն նա շարունակում է իր հիվանդ երեւակայությունը՝ «դավադրության» տեսությամբ ինձ ինչ-որ խաղերի մեջ ներքաշել: Ես մասնակցեցի ընտրությանը, որ ընտրությունները լինելու են ազատ ու արդար, առաջնորդվելով բացառապես Սահմանադրությամբ եւ օրենքներով: Ունենալով համակիրներ եւ ծախսելով ընդամենը 1,3 մլն դրամ՝ ցույց տվեցի, թե ինչպես պետք է կազմակերպել նախընտրական գործընթացը, մեծ աջակցություն ընտրողների շրջանում, արդյունքում, ըստ պաշտոնական թվերի՝ ստացա մոտ 12 հազար քվե: Սամվելի ծննդավայրում՝ Գորիսի տարածաշրջանում ընտրություններ չեն եղել, այլ եղել է լավ կազմակերպված միջոցառում, որի նպատակն է մարզպետի թեկնածուի օգտին հնարավորինս շատ քվեաթերթիկներ լցնել: Եթե Սամվել Հարությունյանը կարողանա ապացուցել ՍԴ-ում, որ Գորիսում՝ իր ծննդավայրում, ընտրությունները ընտրություններ չեն եղել, ինձ մնում է նրան հաջողություն մաղթել»:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# «Ոչ մեկս երդում չի տվել, որ ամբողջ կյանքում ՀԱԿ-ի կազմում կլինենք»

## Ասում է ՍԴՀԿ ատենապետ Լյուդմիլա Սարգսյանը

Երեկ Aravot.am-ը ՍԴՀԿ ատենապետ Լյուդմիլա Սարգսյանից մեկնաբանություն խնդրեց՝ ՀԱԿ-ից հեռացողների հետ կապված: Տիկին Սարգսյանը հարցին հարցով պատասխանեց. «Ովքե՞ր են հեռանում, տեղյակ չեմ»: Երբ հիշեցրինք Աշոտ Զաքարյանի, Արամ Սարգսյանի մասին՝ Լյուդմիլա Սարգսյանն ասաց, որ «Հանրապետության» որոշումն ու մոտեցումները հարգում է. «Դա նրանց իրավունքն է, մենք բոլորս անկախ կուսակցություններ ենք, եւ ոչ մեկս երդում չի տվել, որ ամբողջ կյանքում ՀԱԿ-ի կազմում կլինենք: Իհարկե, դա մեզ չի վերաբերում, բայց չեմ կարող չհարգել Արամ Սարգսյանի կարծիքը: Նրան կանաչ ճանապարհ, մենք միասին 4-5 տարի աշխատել ենք, որի համար շնորհակալ եմ եւ մաղթում եմ ամենայն բարիք»:

Մենք հետաքրքրվեցինք, թե այսօր «Հանրապետությունից» բացի՝ ուրիշ անդամների կողմից դժգոհություններ չկա՞ն ՀԱԿ-ի վարած քաղաքականությունից՝ նա պատասխանեց. «Այսօր ընդհանրապես երկրում մի վիճակ է ստեղծված, որ բնականոն ընթացք է տեղի ունենում: Դա ոչ միայն ՀԱԿ-ում է, դա «Ժառանգությունում» է, դա «Բարգավաճում» է, դա ՀՀԿ-ի ներսում է: Եկել է մի պահ, որ բոլորն իրենց հաշիվ են տալիս, թե ինչպես պիտի շարունակեն: Ես ամեն դեպքում մեր կազմում առանձնապես մեծ դժգոհություններ չեմ տեսնում»:

Լյուդմիլա Սարգսյանը վստահեցրեց, որ իրենք մանդատները վերցնելու որոշումն ընդունել են ընդհանուր քննարկման միջոցով. «Դա մեր ընդհանուր որոշումն է, մենք չենք ունեցել որոշում, որ կարող է մանդատը դնենք: Ես կարծում եմ՝ թեկուզ այդ փոքր՝ 7 հոգիանոց խումբը, որ մտնելու է ԱԺ, այնտեղ ունակ է շատ լուրջ փոփոխություններ իրականացնելու: Մեր պայքարը շարունակվելու է ե՛ւ դրսում, ե՛ւ Ազգային ժողովի ամբիոնից: Դեմը նախագահական ընտրություններ են, մենք հեռուստաեթերի հնարավորություններ շատ քիչ ենք ունենում, ուրեմն պիտի կարողանանք օգտագործել յուրաքանչյուր հարթակ, յուրաքանչյուր ամբիոն»:

Մեր հարցին՝ ԲՀԿ-ն ֆինանսապես չի՞ օգնում է ՀԱԿ-ին՝ տիկին Սարգսյանը պատասխանեց. «Զարմանալի հարց եք տալիս, մենք ո՞նց կարող ենք մեկ այլ քաղաքական ուժի ֆինանսական աջակցությունն ընդունել, դա կարծիք է, որ շրջանառվում է: Չեմ զարմանա, որ այդ կարծիքը տարածում են հանրապետականները: ՀԱԿ-ը արդեն 4 տարի է՝ իր գործունեությունը ծավալել է առանց «Բարգավաճի», եւ մեր խնդիրները մենք լուծել գիտենք»:

ՀՌԻՓՍԻՄԵ ՋԵԲԵՋՅԱՆ

## ՄԵԿ ԼՈՒՐ

### «Մուտիլովկաները թողնենք մի կողմ»

«Բարգավաճ Հայաստան» եւ Հայ ազգային կոնգրես դաշինքի ներքին պառակտումների մասին խոսակցությունները կառավարման փորձագետ Հարություն Մեսրոպյանի գնահատմամբ՝ իմիտացիա կամ «սպիտակ աղմուկ» են: «Ցանկացած հակասություններ, դաշինքներ, հետո դաշինքների փլուզումները իմիտացիա են, խորքայինը հետեւյալն է, որ մենք Հայաստանում գնում ենք դեպի ողբերգություն, որովհետեւ մեզ մոտ փլվում են պետական գործունեության գրեթե բոլոր ոլորտները: Այս ֆոնի վրա խոսել, թե ով ում հետ ժամանակավորապես դաշնակից եղավ, մեկը մյուսին ժամանակավորապես փնովեց, բամբասանքների դաշտ է... Մուտիլովկաները թողնենք մի կողմ»,- Aravot.am-ին ասաց պարոն Մեսրոպյանը:

Նրա խոսքերով՝ առաջիկա նախագահական ընտրություններին ընդառաջ՝ կուսակցությունները, բացի մուտիլովկաներից, զբաղված են նաեւ իրենց գինը բարձրացնելով: Իսկ նոր խորհրդարանի մասին փորձագետը ներկայացրեց իր գնահատականները. «Հայաստանում ավանդույթ է ձեւավորվել, որ ամեն հաջորդ խորհրդարանը լինի նախորդից վատը. այս ավանդույթը կայուն ու հուսալի ձեւով շարունակվում է»:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

# «Արի տուն» ծրագիրը խափանում են մաքսակետում

## Հայաստանի սահմանին մաքսավորները հայրենադարձներին առանց սեփական իրերի են ներս թողնում

Մոտ 20 տարի Բուլղարիայում բնակվող Հրայր Հովհաննիսյանը սրտին մոտ ընդունելով սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի եւ կառավարության պատասխանատուների՝ սփյուռքահայերին ուղղված «Արի տուն» հորդորը՝ հավաքում է իրերն ու որոշում վերջնականապես հաստատվել հայրենիքում՝ Հայաստանում: Բուլղարիայի իր բնակարանի բոլոր իրերը՝ բրդյա ծածկոցը, սպասքը, փոքրիկ գազօջախը, մի 2 զույգ կոշիկ, հին մագնիտոֆոնը, աշխատանքային գործիքները, շախմատը, լվացքի մեքենան ու նույնիսկ տոնածառի խաղալիքներն ու էլի մի շարք իրեր հավաքում է, լցնում սեփական մեքենան ու ճանապարհվում հայրենի տուն: Հրայրն ամբողջ ճանապարհին ծրագրեր է կազմում, թե ինչպես է ապրելու հայրենիքում, հասնելով Հայաստանի սահման՝ Բավրայի անցակետում նրա բոլոր ծրագրերը հօդս են ցնդում: Մաքսակետում նրանից պահանջել են «Ֆորդ» ավտոմեքենայի բեռնախցում եղած 840 կիլոգրամ քաշով ամբողջ իրերը մաքսազերծել, եթե ոչ՝ նվիրատվություն անել հայրենիքին, ասելով՝ այնքան աղքատներ կան Հայաստանում, մեկին լավություն կանես:

«Առավոտի» հետ զրույցում Հրայր Հովհաննիսյանի հոր՝ Հենրիկ Հովհաննիսյանի խոսքերով, որդու՝ Հայաստան բերած իրերն այնքան հնամաշ են, որ միմիայն որդուն պետք կգան, մինչդեռ օրենքով այդ «հնության» համար պահանջում են վճարել $2-3: Հոր նկարագրմամբ. «Տղաս չգիտեր, որ մաքսային բեռի թույլատրելի սահմանը 50 կիլոգրամն է, ու իր բնակարանում ինչ եղել է, ամբողջը հետը բերել է: Օրինակ՝ հին ռադիո, դիպլոմատ, կառնիզ, կոշիկի կալոտկա, երեխայի խաղալիք, կասետնիցա, բազկաթոռ, սեղան, մի հատ շկաֆ՝ 2 հատ դարակով, ու բոլորը երեւի մի 20 տարվա օգտագործած ապրանքներ, ու դրանց համար 3 հազար դոլար են ուզում: Այդ բեռը Աբովյանի պահեստարանում դատարկելիս անգամ բանվորներն են զարմացել դրանց հնության վրա»:




Պարոն Հովհաննիսյանի պատմելով՝ մաքսային բրոկերի միջոցով փորձել են ապրանքը տեսակավորել, որպեսզի յուրաքանչյուր, այսպես ասած՝ ակտի մեջ 3 անուն ապրանք ներկայացվի, ու յուրաքանչյուր ակտի համար, ըստ օրենքի, վճարվի 5000 դրամ: Սակայն մաքսատան աշխատակիցները պահանջել են ոչ միայն յուրաքանչյուր ապրանք առանձին մաքսազերծել, այլեւ ասենք՝ կերամիկայից սպասքն էլ հատ-հատ մաքսազերծել: Օրինակ՝ սպասքի մեջ մտնում են ափսեներ, բաժակներ, կերամիկայից թեյնիկ եւ այլն: Պարոն Հովհաննիսյանի խոսքերով՝ «Փաստորեն, պիտի դանակների ու պատառաքաղների, գդալների ու այլ խոհանոցային իրերի համար առանձին-առանձին վճարել: Աշխատանքային գործիքներից էլ պլասկակուպցիի եւ պտվյորկաների համար էլ առանձին առանձին վճարել: Թալան է, ի՞նչ է: Սե՞նց են կանչում տուն: Փոխանակ հայրենադարձների համար նպաստավոր պայմաններ ստեղծեն՝ մի բան էլ հիասթափեցնում են»: Հայրենիքի՝ նման «օրենսդրական» վերաբերմունքից վրդովված պարոն Հովհաննիսյանի որդին՝ Հրայրը, հանդիպել է սփյուռքի նախարարի հետ եւ իր դժգոհությունը ներկայացրել. «Տղաս նախարարին ասել էր՝ բա ասում եք՝ եկեք տուն, եկեք տուն: Եկել ենք, սա՞ է ձեր տունը, ինչո՞ւ եք խաբում մարդկանց: Սկզբում Հրանուշ Հակոբյանը զարմացել է, հետո լսելով խնդիրը՝ հորդորել է դիմել նախարարության Եվրոպայի հայ համայնքների վարչություն: Բայց այնտեղից էլ պատասխանեցին, որ իրենք չեն կարող օգնել ու ոչ մի լծակ չունեն: Բա էլ ինչո՞ւ է կոչվում սփյուռքի նախարարություն»:

Կառավարության «Արի տուն» կանչին հետեւած Հրայր Հովհաննիսյանը փաստորեն որոշել էր Բուլղարիայի իր փոքրիկ «տուն-տեղով» տեղափոխվել Հայաստան, սակայն հայրենիքը, ճիշտ է, տնից չի զրկել, բայց զրկում է առաջին անհրաժեշտության իրերից: Այն, որ մաքսակետի աշխատակիցները հորդորել են այդ հնամաշ իրերը հանձնել հայրենիքին, որպեսզի հայրենիքն էլ հանձնի իր աղքատ զավակներին, «հայրենադարձի» հոր՝ Հենրիկի դիտարկմամբ՝ ձեռառնոցի է. «Ի՞նչ է նշանակում՝ տոնածառի խաղալիքի համար մաքս վճարել, այն էլ Աստված գիտի՝ կտեսնե՞մ էդ տոնածառը Նոր տարվան, թե ոչ: Լավ, հանձնենք հայրենիքին, բայց ես էլ եմ անապահով, աղքատ, 2 կոպեկ թոշակ եմ ստանում, զոնե այդ իրերը հետո տան ինձ՝ որպես աղքատի: Այս ի՞նչ երկիր է, ամեն ինչից զրկում են»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

Գնիր հեռախոս եւ գնա Եվրոպայի Ֆուտբոլի առաջնության հաղթող երկիր



«ՎիվաՍել-ՄՏՍ»-ի սպասարկման կենտրոններից հեռախոս գնողները կարող են շահել ճամփորդություն երկու հոգու համար դեպի 2012 թվականի Եվրոպայի Ֆուտբոլի առաջնության հաղթող երկիրը:

Մայիսի 14-ից մինչեւ հունիսի 10-ը, գնելով MTS, HTC, BlackBerry, Samsung Galaxy Nexus կամ Samsung Google Nexus S հեռախոս «ՎիվաՍել-ՄՏՍ»-ի սպասարկման կենտրոններից, կարելի է մասնակցել հատուկ խաղարկության եւ շահել արժեքավոր նվերներ, այդ թվում՝ HTC Flyer պլանշետային համակարգիչ, BlackBerry Bold 9700 սմարթֆոն, Samsung Google Nexus S սմարթֆոն, MTS Ego սմարթֆոն, MTS Touch 551 հեռախոս, ՄՏՍ կոնեկտ դայմոնդե USB մոդեմ: Իսկ ամենահաջողակին սպասում է գլխավոր մրցանակը՝ ճամփորդություն երկու հոգու համար դեպի 2012 թվականի Եվրոպայի Ֆուտբոլի առաջնության հաղթող երկիրը:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.vivacell.am կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:

# Ամրակիցի գյուղապետը համ ջանգյուլում է պարում, համ մտածում գյուղի մասին

2012թ. մայիսի 5-ի «Առավոտ» թերթում հրապարակված «Գյուղապետը գյուղի մասին չի մտածում՝ «ջանգյուլո՞ւմ» է պարում» հրապարակմանը, որտեղ Լոռու մարզի Ամրակից գյուղի 78-ամյա բնակիչ Սայադ Սարգսյանը դժգոհություն էր հայտնել, որ Ամրակից գյուղի գյուղապետ Արթուր Ներկարարյանը համայնքի բնակիչներին իրականացրած ծրագրերի մասին հաշվետվություններ չի ներկայացնում, գյուղի քարուքանդ փողոցները չի վերանորոգում, գյուղացու հոգսով չի հետաքրքրվում, Ամրակիցի գյուղապետը պատասխանում է. «Ինձ համար շատ ցավոտ է, որ մեր համայնքում կա այդպիսի բնակիչ, որը համայնքի խնդիրները վերլուծելու եւ հասկանալու, զուցե եւ օգնելու փոխարեն կարողանում է միայն բողոքել, անհիմն փնովել ու վիրավորել:





Փորձեմ ներկայացնել իրավիճակի իրական նկարագիրը: Ես իրոք աշխատում եմ որպես Ամրակիցի (նախկինում Կիրովո) գյուղապետ շուրջ 17 տարի, միայն այն պատճառով, որ Ամրակից համայնքի բնակիչները ազատ ընտրությունների միջոցով ցանկություն են հայտնում ինձ տեսնել որպես համայնքի ղեկավար:

Հայաստանի Հանրապետության ոչ մի օրենք չի նախատեսում Սայադ Սարգսյանի կողմից պահանջվող հաշվետու ժողովը: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 հոդվածի 3-րդ կետի՝ համայնքի ղեկավարը տարեկան ֆինանսական հաշվետվություն է ներկայացնում համայնքի ավագանուն, որը արտացոլում է համայնքի ղեկավարի կողմից կատարած աշխատանքների ամբողջական նկարագիրը: Այդ գործողությունը կատարվում է օրենքով սահմանված ժամկետներում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ այն փակցվում է գյուղապետարանում՝ ավագանու որոշումների համար հատկացված անկյունում: Գյուղապետարան դիմող բոլոր բնակիչներին անմիջապես տրամադրվում են պահանջվող տվյալները, բացատրություն է տրվում ցանկացած հարցի վերաբերյալ: Պարոն Սարգսյանին տարիներ շարունակ տրամադրվում են իր կողմից պահանջվող բոլոր ֆինանսական փաստաթղթերը, հաշվետվությունները, հաստիքացուցակը եւ այլն:

Համայնքի փողոցների մի մասը ասֆալտապատված է: Գյուղամիջյան ճանապարհները խճապատված են: Սակայն ճանապարհներն ամբողջովին ասֆալտապատելու համար հարկավոր են միջոցներ, որը համայնքի բյուջեն չունի: Հակառակ դեպքում այդ խնդիրը շուտվանից լուծված կլիներ:

Ինչ վերաբերում է կաթի իրացմանը, գյուղացիները հնարավորություն ունեն կաթը վաճառելու երեք տարբեր գնորդների:

Ամրակից համայնքի արոտավայրերը փաստացի 2-րդ կարգի են, որի հարկը կազմում է 6435 ՀՀ դրամ՝ 1 հա-ի համար, բայց գյուղապետարանը գանձում է բնակիչներից ոչ թե որպես 1-ի կարգի համար, այլ 6435 ՀՀ դրամի փոխարեն՝ ընդամենը 2200 ՀՀ դրամ:

Անցնեմ հաջորդ հարցին: Պարոն Սայադ Սարգսյանը պնդում է, որ «սեփականաշնորհման տարիներին գյուղապետարանը ունեցել է գյուղտեխնիկա»: Ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ գյուղապետարանը գյուղտեխնիկա երբեք չի ունեցել եւ չունի:

Ինչ վերաբերում է համայնքի բնակիչների թվին, այն, համաձայն Հայաստանի Հանրապետությունում 2011թ. հոկտեմբերին անցկացված մարդահամարի արդյունքների, կազմում է 700 բնակիչ: «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով գյուղապետարանի աշխատակազմում չի նախատեսվում «քարտուղարուհի» պաշտոնը, այլ գյուղապետի աշխատակազմի քարտուղար, որը հանդիսանում է նաեւ որպես աշխատակազմի ղեկավար, որն էլ բանիմաց է եւ կատարում է իր պարտականությունները ժամանակին եւ պատշաճ որակով:

Ուզում եմ նաեւ հայտնել, որ Լոռու մարզի Ամրակից համայնքը 95%-ով գազիֆիկացված է, որից 50%-ը՝ 2007-2008թթ.-ի համայնքի միջոցների հաշվին, 2005թ. համայնքի մանկապարտեզը վերանորոգվել է եւ մինչ օրս գործում է»:

Առավոտ
a r a v o t d a i l y
ՀԻՆԳՇԱԲԹԻ 17.05.2012

# Անկախ Հայաստանի, խղճի ու բանականության սահմանից այնկողմ

## Խոսք՝ որպես նախաբան

Ինձ մտատանջող մի հարց կա: Այդ հարցն ինձ հաճախ են տալիս: Դրան ես այսպես եմ պատասխանում. «Իհարկե, չեմ զղջում, որ հանուն անկախության գաղափարի երիտասարդ տարիներս անցկացրել եմ խորհրդային բանտերում ու աքսորում»: Եվ ավելացնում եմ. «Անկախության պայքարը մեր ընտրությունը չէր: Այդ մենք էինք նախախնամության կողմից ընտրված: Իսկ ինչ վերաբերում է անարդարությանը, նրա հետ ես այսօր էլ եմ անհաշտ»:

Պատասխանս միանգամայն անկեղծ է: Իսկ ինչո՞ւ եմ մտատանջության մեջ ընկնում, երբ ինձ դիմում են այդ հարցով: Դրա պատճառը ես իմ մեջ չեմ գտնում, այլ անկախացած Հայաստանի: Ուրեմն՝ նաեւ իմ մեջ:

## Արնագույն դրոշի ներքո

Այն երկիրը, որի գաղափարախոսական պատը շինական պատի տասը հաստությունն ուներ, երկիրը, որի արդարության խորհրդանիշը աշխարհի երեսին անարդարության ու դեմագոգիայի ամենացայտուն դրսեւորումներից մեկն էր՝ հավասարությունը, երկիրը, որի գաղափարական միակ դարբնոցը՝ «դարաշրջանի միտք, պատիվ ու խիղճ» կոմկուսը, իր դռները լայնորեն բացում էր բանվորի ու գյուղացու առաջ, իսկ մտավորականը թշնամու գերությունից ողջ-առողջ վերադարձածի նման կասկածի էր ենթակա, այդ երկրի գաղափարական երեսպաշտության շղթայի վերին օղակը Գլխավոր օրենքում ամրագրված՝ ազգերի ազատ ինքնորոշման դրույթն էր, որի մասին Խորհրդային Միությունում խոսվում էր թութակի տրամաբանությամբ ու պատասխանատվությամբ: Եթե հավատայիր այդ դրույթին եւ խոսեիր այն կիրառելու մասին, կամ էլ փորձեիր ապացուցել, որ ԽՍՀՄ-ում այն ֆիկցիա է, փաստացի գոյություն չունի, կհայտնվեիր այնտեղ, որտեղ անցան իմ ու ինձ նման շատերի կյանքի տարիները:

Խորհրդային հանրապետությունները, որոնք պարտավոր էին նախկինում խաբվածի պես մի կողմ դնել իրենց անցյալը, երկրպագել բոլշեւիզմի խորհրդանիշները, պարտադիր կամավորական սկզբունքով ձուլվել միասնության զանգվածին, եւ դեռ այս ամենն ընդունել որպես մեծագույն արտոնություն, գրեթե բոլոր այդ «եղբայրական» հանրապետություններն ունեին իրենց «վտանգավոր տարրերը», որոնք կարմիր ներկայի ու «վառ ապագայի»-ի ապազգային բռնապետական հոսանքին հակառակ էին լողում: Խորհրդային պետությունը նրանց համար որոշակի վայրեր ուներ հատկացրած. երեւակայությամբ եւ ինքնատիպ մտածողությամբ օժտված մտավորականները պատահարի էին ենթարկվում կամ «տեղափոխվում» հոգեբուժարան, իսկ մեզ՝ պայքարի քաղաքական եւ ըստ էության՝ միանգամայն օրինական ձեւ ընտրածներիս սպասում էին քաղաքական կալանավայրերն ու աքսորը:

Այս ամենն այսպես էր իր կես դարը բոլորած եւ արդեն բավական «քաղաքակրթված» պետական կառույցում:

## Անկախացումից առաջ

Անազատության տարիներիս մեծ մասն անցկացրել եմ Մորդովիայի 19-րդ ճամբարում: Ընթացքում՝ հեղափոխություններ, պատժախուց, զրկանքներ, հոգեբանական ճնշում: «Քաղաքական դարձի» այդ համակարգը խորհրդային հանրապետությունների «վտանգավոր տարրերին» միեւնույն պատժի վայրեր տեղափոխելով՝ ակամա հնարավորություն էր ստեղծում ծանոթությունների համար, անգամ հասցնում էինք մտերմանալ: Մեր զրույցների հիմնական թեման անկախության գաղափարն էր, մեր երազանքների անկախ հայրենիքների հնարավոր փոխհարաբերությունները: Ազգային ազատագրության գաղափարը մի կողմից մեր երիտասարդ մարմինները դատապարտել էր ցրտի ու քաղցի, մյուս կողմից՝ այդ զրկանքները խիստ շոշափելի կերպով ապացուցում էին մեր պայքարի արդարացիությունը:



1975 թվականի ապրիլի 23-ն էր: Պահի իրավիճակը թելադրում էր առանց ցնցումների անցկացնել Հայոց ցեղասպանության տարելիցի օրը: Այդ էր պատճառը, որ ՊԱԿ-ի աշխատակիցն ինձ հարցրեց, թե ապրիլի 24-ի հետ կապված ինչ մտադրություն ունեմ: Ասացի, որ այդ օրը անցկացնելու եմ ինչպես Հայաստանում. սգի մեջ, չաշխատելով: Հաջորդ օրը երեկոյան ինձ միացան ուկրաինացիներ, ռուսներ, մերձբալթներ, հրեաներ: Նրանց մեջ եւ՛ ուղղափառներ կային, եւ՛ կաթոլիկներ: Մենք զրուցեցինք, ապա աղոթքով ու մեկ րոպե լռությամբ հարգեցինք Հայոց եղեռնի զոհերի հիշատակը: Դա մի սրտառուչ, ինքնատիպ ընկերակցություն էր, որ հետագա տարիներին էլ տարբեր դրսեւորումներով փորձեցինք պահպանել: Այն ազգամիջյան միաբանությունը, որի մասին տարփողում էր Խորհրդային Միությունը, ես իրականում տեսա ճամբարում:

Ցավոք սրտի, իմ գաղափարակից ընկերներից շատերը զոհվեցին անազատության մեջ: Ողջ մնացածներս, աքսորից վերադառնալով, մեր քաղաքական ընդհատված կյանքը շարունակեցինք քաղբանտարկյալների պաշտպանության կոմիտեի հիմնադրմամբ, որը վերածվեց միջազգային կոմիտեի: Անդամագրվեց Վրաստանը (ներկայացուցիչը՝ Մեհրաբ Կոստավան), Ուկրաինան, որը ներկայացնում էին Վյաչեսլավ Չորնովիլը եւ Միխայիլ Գորինը: Այս ամենը հիմք հանդիսացավ ճամբարում ստեղծված կապերը պահպանելու համար: 88-ի հունվարին Երեւանում տեղի ունեցավ երեք հանրապետությունների ներկայացուցիչների հավաք: 90-ին Հայաստան եկան Վասիլ Օվսիենկոն եւ Իվան Սոկուլսկին: Այնուհետեւ սկսվեց ԽՍՀՄ փլուզումը, ու ամենքս մեր երկրում լծվեցինք մեր անելիքներին:

Թե շարժման տարիներին ինչ ցնցումներ, դժվարություններ ու բերկրանք ապրեց մեր ժողովուրդը, բոլորին է հայտնի: Իսկ ինչ էինք զգում մենք՝ անկախականներս, միանգամայն այլ բան է: Պահի պատմական նշանակությունը մեզ համար յուրովի կարեւոր էր ու ըմբռնելի, միաժամանակ՝ անձնական, քանի որ Ազգային միացյալ կուսակցությունը շարժումից շատ տարիներ առաջ՝ 1966-ից, արդեն իր վրա էր վերցրել գերտերությանը «ոչ» ասելու, անկախ Հայաստանի գաղափարը վեր հանելու վտանգավոր, շատերի կարծիքով՝ սիզիփոսյան գործը, որը, սակայն, վստահ եմ՝ կմնա որպես ազգային ինքնությունից հրաժարվելու դեմ մեր երկրի պայքարի հաղթաթուղթը:

## Անկախացումից հետո

88-ի շարժման մեր՝ խորհրդային շրջանի քաղաքական այլախոհներիս կարգախոսը ամենասկզբից էլ «Անկախություն»-ն էր: Շարժման ղեկավարներն անգամ քննադատում էին մեզ՝ անկախական գաղափարներ արտահայտելու համար: Բայց քաղաքական անցքերի քաոսային թվացող հոսանքն արցախյան շարժումը հանգեցրեց մեր ազգային անկախությանը: Հայաստանն անկախ հռչակվեց, եւ ճիշտ ժամանակն էր, որ մեր նորանկախ երկրի ոտքի տակ դրվեր գաղափարական այն հիմքը, որն իրենց կյանքի գնով ստեղծել էին հայ անկախականները: Այդպես քաղաքական անսովոր կարգավիճակում հայտնված մեր քաղաքացու համար կկապվեր անցյալի ու ներկայի շղթան, նաեւ կձեւավորվեր գնահատանքի մթնոլորտ, ինչը հատկապես կարեւոր է նորաստեղծ երկրի համար:

Գրեթե այդ ամբողջ ընթացքում խորհրդային նախկին քաղբանտարկյալների հետ մեր կապը շարունակվում էր: 2009-ին նրանց հրավերով ես մեկնեցի Կիեւ: Օգոստոսի 24-ն էր՝ Ուկրաինայի անկախության հռչակագրի օրը, որ երկրի անկախության օրն է համարվում: Տոնական մեծ շքերթի ժամանակ հրապարակի ամբիոնում կանգնած էին ու երկրի ղեկավարների հետ միասին շքերթն ընդունում էին բոլոր նախկին քաղբանտարկյալները՝ Խորհրդային Ուկրաինայի այլախոհները: Անկախ Ուկրաինան միայն այդ քայլով չէ, որ ցուցաբերել է մարդու վաստակի գնահատման բարձր մշակույթ: Երկրի նախագահի հրամանագրով արդարացվել են քաղաքական հետապնդման ենթարկված բոլոր ուկրաինացիները: Անկախ Ուկրաինան իր տոնացույցում քաղաքական բռնությունների զոհերի հիշատակի օր ունի: Նախագահ Յուշչենկոյի հրամանագրով տարբեր շքանշաններով պարգեւատրվել են Մորդովիայի եւ Ուրալի ճամբարներով անցած քաղբանտարկյալները: Մեր ճամբարային ընկերներից ութին Ուկրաինան հերոսի կոչում է շնորհել, որոնցից չորսին՝ հետմահու: Յուզմունքով կարդացի ընկերոջս՝ Վասիլ Ստուսին հետմահու Ուկրաինայի հերոսի կոչում ու Շեւչենկոյի անվան պետական շքանշան շնորհելու մասին որոշման տեքստը. «Ոգու անընկճելիության, Ուկրաինային անձնվիրաբար ծառայելու, ազգային գաղափարախոսության պահպանման, իր ստեղծագործություններում համամարդկային բարձր արժեքներ արտահայտելու համար»: Նախագահը պետական պարգեւներ է շնորհել իր երկրի հարյուր հիսուն «նախկին քաղկալանավորի ու բռնադատվածի՝ Ուկրաինայի ազգային ու պետական վերածննման գործում ունեցած անձնական ներդրման, ազատության եւ անկախության գաղափարների հաղթանակի համար մղված պայքարում ցուցաբերած անձնազոհության, ակտիվ հասարակական գործունեության համար»: Պետական պարգեւներ են շնորհվել Հելսինկյան համաձայնագրի պաշտպանության խմբին անդամակցած ուկրաինացիներին: Խորհրդային քաղբանտարկյալ, Շեւչենկոյի անվան պետական շքանշանակիր Էվգեն Սվերստյուկը, որ երկու անգամ հրաժարվել է Ուկրաինայի հերոսի կոչումից ու բավարարվել Ազատության շքանշանով, այսօր էլ՝ 85 տարեկան հասակում խրախուսվելով իր երկրից ու ժողովրդից, շարունակում է իր ազգային, հասարակական գործունեությունը: Անկախության պայքարի այդ ինտելեկտուալ գործիչը Ուկրաինայի խիղճն է համարվում: Բանաստեղծուհի Լինա Կոստենկոյի բնակարան է այցելել երկրի նախագահը՝ հանձնելու Ուկրաինայի հերոսի շքանշան: Կոստենկոն շնորհակալություն է հայտնել՝ ասելով, որ ինքը չի կրում կառավարական զարդեր: Այդ ասելով՝ նա ամենեւին չի մտահոգվել, թե կարող է նեղացնել նախագահին եւ այդ դեպքից հետո էլ շարունակել է մնալ նրա բարեկամը: Պարգեւների շարքը բավական մեծ է եւ դժվար է այն ամբողջությամբ ներկայացնելը: Հատկանշական է, որ գրեթե բոլոր պետական պարգեւների հանձնման տեքստերում նախկին քաղբանտարկյալները ներկայացված են որպես օրենքի պաշտպաններ:

Այսպես, Ուկրաինայի նախկին նախագահը բարձր գնահատեց ազգային արժեքներն ու անկախության մարտիկների վաստակը, ինչն անչափ կարեւոր է երկրի «քաղաքական երթուղին» ճշտելու համար: Յուշչենկոն նաեւ իր երկրում դրեց արդարության բարձր նշաձող. մասնակցեց նախագահական ընտրություններին եւ հարգելով իր երկրի ժողովրդավարական ձեռքբերումներն ու չօգտագործելով պետական, կառավարական որեւէ լծակ՝ չընտրվեց: Տեղին է հիշել Ֆոլկներյան պարտության էսթետիկայի գաղտնիքը՝ «Հաղթում է նա, ով պարտվել գիտի»: Ըստ նրա՝ պարտությունն էլ հաղթանակ է, բայց այնպիսի հաղթանակ, «որը չեն տոնում, այլ ընդունում են որպես վկայություն»: Իսկ ո՞րն է մարդու վաստակի գնահատման հարցում մեր երկրի, եթե պարտություն չասենք, ապա՝ վրիպելու գաղտնիքը, ինչն իր հետեւից բազում խնդիրներ է բերում:

Խորհրդային տարիների անկախականների բանակը ուշադիր հետեւում ու սովորում էր հայ անկախականներից: Իրենց երկրի պետական պարգեւները ստացած ուկրաինացի անկախականներ Ստուսը, Չորնովիլը, Օվսիենկոն, Պոպադյուկը, Շաբատուրան, Կոլինեցը, Կրավցիվը, Սեմենյուկը… Հայաստանի Ազգային միացյալ կուսակցության համակիր անդամ էին: Մեզ վրա էր սեւեռված նաեւ խորհրդային անվտանգության աչքը՝ որպես քաղաքականապես առավել կոփված ու «մարտունակ» կազմակերպության: Անկախության դրոշն առաջինը Հայաստանում բարձրացվեց: Կատաղի հակախորհրդային մերձբալթյան երկրներն անգամ մեզանից էին սովորում: Բայց, ցավոք, անկախության գաղափարակիր երկրների մեջ, խորհրդային կարգերի փլուզումից հետո, Հայաստանը մնաց ամենախորհրդայինը: Եվ առավել ցավալի է, որ նման իրավիճակները մեր ժողովրդի պատմության մեջ բավական հաճախադեպ են:

## Խոսք՝ որպես վերջաբան

Գուցե ճիշտ կլիներ, եթե իմ փոխարեն մեկ ուրիշը գրեր այս ամենի մասին, քանի որ ինքս խորհրդային շրջանի քաղաքական դատապարտյալ եմ, եւ մտահոգությունս հնարավոր է՝ սխալ ընկալվի: Անհանգստությունս կապված չէ իմ ապրած կյանքն արժեւորելու հետ: Նվիրաբերումս անհատույց է: Կրակի մեջ նետվողը դատողություններ չի անում ոչ այրվելու մասին, ոչ էլ «այրվողի կոչում» ստանալու: Խնդիրն իմ երազած անկախ Հայաստանի վաղն է, որը սկսվում է այսօրվա արժեհամակարգի՝ գնահատանքների այդ ամբողջության ընտրությամբ, ինչն ըստ էության՝ առաջին հերթին գնահատողին է հարկավոր:

Երեկ մենք՝ անկախականներս, խորհրդային երկրի սեւեռուն ուշադրության կենտրոնում էինք: Այդ էին պահանջում մինչ օրս իր ուրվականային գոյությունը շարունակող երկրի ամբողջատիրական խիղճն ու բանականությունը: Այսօր, ցավոք, մեր վաստակն անտեսված է մեր ազգային պետության, նրա խղճի ու բանականության կողմից, եւ դա ինձ մտահոգում է ոչ թե իմ անցյալի, այլ երկրիս ապագայի առումով:

ՌԱԶՄԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

# Երիտասարդ կոմպոզիտորները խնդիր ունեն

## Նրանց հազվադեպ են դիմում Հայաստանում

Վերջին շրջանում թեեւ սկսնակ կոմպոզիտորների նկատմամբ պետական հոգածության նշույլներ կան, սակայն դա հեռու է խնդրի լուծում լինելուց: Սրանում մենք համոզվեցինք՝ զրուցելով երիտասարդ կոմպոզիտոր Քաջիկ Գրիգորյանի հետ, որի հեղինակային երեկոն կայացավ օրերս՝ Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում՝ Հայ երիտասարդ կոմպոզիտորների եւ կատարողների միավորման (նախագահ՝ Արսեն Բաբաջանյան) նախաձեռնությամբ:

Զրույցի սկզբում ուզեցինք ճշտել մեզ հասած այն տեղեկությունը, թե իր որոշ գործընկերների օրինակով Քաջիկն էլ է պատրաստվում մեկնել Եվրոպա: Մեր զրուցակիցը հաստատելով լուրը՝ հայտնեց. «Օրերս մեկնում եմ Գերմանիա՝ Էսսեն, որտեղի Folkvang hochschule-ում վարպետության դասընթացներ են անցնում ու կատարելագործվում Երեւանի կոնսերվատորիայի ընկերներս: Ցանկությունս մեկն է՝ կազմակերպել երիտասարդ կոմպոզիտորների ու կատարողների փոխադարձ այցելություններ»:

Կոմպոզիտորը հավելեց, թե այն տպավորությունը թող չստացվի, որ մեր պետությունը կամ պատկան մարմինները բացարձակ զերծ են մնում կարիերա սկսող արվեստագետներին աջակցելուց. «Ուղղակի դա մեզ չի գոհացնում»: Քաջիկը հիշեց, որ ժամանակին իրենք առաջարկով դիմել էին վարչապետ Տիգրան Սարգսյանին, որպեսզի կոնսերվատորիան ավարտող կոմպոզիտորների դիպլոմային աշխատանքները ներկայացվեն պրոֆեսիոնալների՝ մեր պետական նվագախմբերի, երգչախմբերի մատուցմամբ, հիմնավորելով, թե դա արդեն կարիերայի սկիզբ է եւ կարեւոր է ունկնդրի ծանոթությունն առաջին քայլերն անող ստեղծագործողի հետ: «Ափսոս, որ երաժշտասեր մեր վարչապետը առաջարկը վերահասցեագրեց կոնսերվատորիայի նախկին ռեկտորին, որը ընթացք չտվեց... Նշեմ, որ շուտով մշակույթի նախարարության աջակցությամբ կիրատարակվի ալբոմ, որտեղ ընդգրկված կլինեն մեր միավորման 4 անդամների՝ Արսեն Բաբաջանյանի, Անդրանիկ Ֆատալյանի, Գեւորգ Բադալյանի եւ իմ մանկական ստեղծագործությունները: Վերջիններս Հայ երիտասարդ կոմպոզիտորների եւ կատարողների միավորման նախաձեռնությամբ շուրջ 2 տարի ներկայացրել ենք Երեւանի եւ մարզերի երաժշտական դպրոցներում: Արձագանքներից ելնելով՝ հույս ունենք, որ դրանք կընդգրկվեն դպրոցների ուսումնական ծրագրերում: Վերջին շրջանում էլ հայաստանյան TV-ները ոչ հաճախ, սակայն անդրադառնում են մեր ստեղծագործություններին, բայց... Այս առումով ուզում եմ առանձնացնել «Շողակաթ» հեռուստաընկերության բարյացակամ վերաբերմունքը»,- ասաց Քաջիկը:



Նա բարձրացրեց մի խնդիր, ինչի մասին քանիցս լսել ենք մեզ հետ զրուցած երաժիշտներից. «Պետական կոլեկտիվները հիմնականում երաժիշտներ են հրավիրում դրսից՝ մեծ հոնորարներով, եւ պարզ է, որ նման պարագայում մեր երիտասարդ կատարողները անտեսվում են: Կարծում եմ՝ պետք է պատկան մարմինները վերանայեն այդ աշխատաոճը: Մեր կատարողներն էլ ուշադրության են արժանանում դրսում: Օրինակ՝ միավորման անդամ, դաշնակահար Արմեն Մանասյանը վերջերս հանդես եկավ Էստոնիայում՝ տեղի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ, կատարելով Ռախմանինովի դաշնամուրի եւ նվագախմբի 3-րդ կոնցերտը, որի արձագանքները հասան նույնիսկ Ամերիկա...»:

Դիտարկմանը, թե ճանաչված կոմպոզիտորներից շատերը լայն ունկնդրի շրջանում հայտնի են դարձել հանրամատչելի ստեղծագործությունների շնորհիվ, Քաջիկ Գրիգորյանն ասաց. «Ունեմ դաշնամուրի եւ ջութակի համար գրված «Երեք տպավորություն ճանապարհորդությունից» ստեղծագործությունը, որի 2-րդ մասը նոկտյուրն է, այն էլ չափից ավելի հանրամատչելի է: Այս դեպքում, օրինակ, սերիալներով ողողված հայաստանյան TV-ները երաժշտական նյութ կարող են ընտրել ոչ թե արտերկրյա՝ թեկուզ ճանաչված հիթերից, այլ դիմեն մեր պրոֆեսիոնալներին»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

### Զբոսաշրջիկներին հետաքրքրում է ազգային խոհանոցը



«Տեսակետ» ակումբի երեկվա ասուլիսին խոհարարական տուրիզմի մասին խոսեցին «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման եւ պահպանման» հասարակական կազմակերպության նախագահ Սեդրակ Մամուլյանն ու «Ռումեա» գայթակղիչ ճանապարհորդությունների ակումբի գլխավոր տնօրեն Ռուբեն Գրիգորյանը:

Պարոն Մամուլյանը իր խոսքում նշեց, որ խոհարարական տուրիզմը ձեւավորվել է վերջին տարիներին, եւ մեծ դեր ունի Հայաստանի տուրիզմի զարգացման մեջ. «Բոլորս էլ, երբ գնում ենք ուրիշ երկիր, առաջին հերթին ուշադրություն ենք դարձնում խոհանոցին: Դա ամենաուշն է մոռացվում»:

Ռուբեն Գրիգորյանը փաստում է, որ Հայաստանում հաճախ չգիտենք՝ ինչ պիտի հրամցնենք զբոսաշրջիկներին իրենց այցի ընթացքում: Մամուլյանն էլ տեղեկացրեց, որ նրանց առաջարկվում է ազգային խոհանոցից ամեն ինչ՝ ապուրներից մինչեւ աղանդեր: Եվ որպեսզի զբոսաշրջիկները ծանոթանան մեր ավանդական ուտեստներին, «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման եւ պահպանման» հ/կ-ն կանցկացնի ցուցահանդես-փառատոներ: Առաջինը նախատեսված է հունիսի 12-ին՝ «Տոնածիսակատարական խոհանոց» անվանմամբ: Մասնակցության հրավերներ ուղարկել են տարբեր երկրներ, ինչպես նաեւ Հայաստանում ապրող ազգային փոքրամասնություններին:

«Թոնրատոն», Տոլմայի, Խորովածի ու Գինու փառատոներ՝ սրանք էլ առաջիկայում կազմակերպվելիք մյուս միջոցառումներն են:

Ըստ Ռուբեն Գրիգորյանի, մենք ունենք իրադարձությունների կազմակերպման ու անցկացման ժամկետների խնդիր, իսկ եթե դրանք հստակ լինեն, շատ հնարավոր է, որ զբոսաշրջիկները հատուկ դրա համար այցելեն Հայաստան:

ԱՐԱՄ ԱՐԱՐԱՏՅԱՆ

Համալսարանում այս տարի բուհական ընդունելության համար միասնական քննությունների դիմում-հայտ է ներկայացրել 18105 շրջանավարտ-դիմորդ, որոնցից 11792-ը հունիսի 5-ին միասնական քննություն կհանձնի հայոց լեզու եւ հայ գրականություն առարկայից, 8954-ը հունիսի 12-ին՝ մաթեմատիկայից:

Քննությունները կմեկնարկեն հունիսի 1-ին, այդ օրը դիմորդները քննություն կհանձնեն կենսաբանություն (1941 դիմորդ), աշխարհագրություն (393 դիմորդ) եւ ընդհանուր պատմություն (401 դիմորդ) առարկաներից: Օտար լեզուներից ռուսերենը նախընտրողները 1283-ն են, անգլերենը՝ 8171, գերմաներենը՝ 520, իսկ ֆրանսերենը՝ 447: Իտալերենից, իսպաներենից եւ պարսկերենից միասնական քննություն հանձնելու ցանկություն է հայտնել, համապատասխանաբար, 4, 25 եւ 5 շրջանավարտ-դիմորդ: Տեղեկացնենք, որ ռուսաց լեզվի քննությունը կանցկացվի հունիսի 8-ին, իսկ մնացած օտար լեզուներից դիմորդները քննություն կհանձնեն հունիսի 15-ին: Ֆիզիկա առարկայից դիմում-հայտ ներկայացրել էր 3392 դիմորդ, նրանք քննություն կհանձնեն հունիսի 19-ին, եւ միասնական քննությունների եզրագիծը կփակվի հունիսի 22-ին: Վերջին օրը դիմորդ-շրջանավարտները քննություն կհանձնեն հայոց պատմություն (3265 դիմորդ) եւ քիմիա (1515 դիմորդ) առարկաներից:

# Թեստերը «ժամանեցին»



Տեղեկացնենք, որ երեկ երեկոյան Հայաստան է բերվել երկդարյա գաղտնի տպագրության ավանդույթ ունեցող անգլիական «Ստեֆան Աուսթին» հրատարակչությունում տպագրված միասնական քննությունների թեստերի առաջին խմբաքանակը, որը օդանավակայանից անմիջապես տեղափոխվել է «Արարատբանկի» կենտրոնական մասնաշենքի պահույստ: Քննություններից մեկ օր առաջ «Հայինկասացիայի» ուղեկցությամբ թեստերը՝ փակ ծրարներում, կտեղափոխվեն քննական կենտրոններ եւ կբացվեն դիմորդների ներկայությամբ: «Առավոտի» հարցադրմանը, թե ինչու այս տարի կրկին Լոնդոնում տպագրվեցին միասնական քննությունների թեստերը, ԳԹԿ մամուլի խոսնակ Գայանե Մանուկյանը պատասխանեց. «Ինչպես հիշում եք, անցյալ տարի միասնական քննությունների բոլոր թեստերը տպագրվեցին ԳԹԿ տպարանում, եւ մեր կառույցն այդ քննությունը գերազանց հանձնեց: Որեւէ արտահոսքի դեպք չի արձանագրվել: Այս տարի այն առարկաների թեստերը, որոնք սակավաթիվ են, նույնպես տպագրվելու են ԳԹԿ տպարանում՝ ԱԱԾ աշխատակցի ներկայությամբ, նկարահանող եւ տեսագրող սարքերի առկայությամբ: Իսկ մեծաքանակ տպագրություն մեկ օրում, ցավոք, դեռեւս ԳԹԿ տպարանը չի կարող իրականացնել, այդ պատճառով մեծաքանակ առարկաների թեստերը տպագրվել են Լոնդոնում»:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

# Ինչպես զսպել հակառակորդի ագրեսիան

«Չնայած ադրբեջանցի դիպուկահարների կողմից արված հրադադարի խախտումներին, Արցախյան ռազմաճակատում չեն իրականացվում մեծամասշտաբ գործողություններ: Ավելին, ադրբեջանցիների կողմից նախահարձակ լինելու քաղաքականությունը շարունակվելու է»,- «Հենարան» ակումբում երեկ հայտնեց ռազմական փորձագետ Դավիթ Ջամալյանը: Ներկայացնելով հրադադարի հոգեբանական առանձնահատկությունները՝ նա նշեց, որ դրա արդյունքում Հայաստանի բնակչությունը մշտապես գտնվում է տագնապային վիճակում. «Իսկ տագնապը ենթադրում է անորոշություն. մարդիկ պատերազմի հետ կապված մտավախություն ունեն եւ չգիտեն՝ վաղվա օրն ինչի սպասեն: Երկու ժողովուրդներն էլ կրում են տագնապի կնիքը, բայց Ադրբեջանն այդ հոգեբանական ֆոնը փորձում է օգտագործել հօգուտ իրեն՝ մեզանում քարոզելով Արցախի անկախության նկատմամբ հուզական տրամադրություն»,- ասաց Դ. Ջամալյանը:

Փորձագետի խոսքով՝ Ադրբեջանը փորձում է սոցիալ-տնտեսական խնդիրներից առաջացած հանրային դժգոհությունն ուղղել Արցախյան հարցի վրա. «Մատնանշում են այն գաղափարը, թե հանձնեք Արցախը եւ ապրեք խաղաղ: Պրիմիտիվ դիրքորոշում կթվա, բայց Ադրբեջանը լավ օգտագործում է դա՝ մեր ժողովրդին հոգեբանորեն ենթարկելով իր քարոզչությանը: Արցախը մեզ համար խաղաղության միակ երաշխիքն է, այնպես որ՝ հակառակորդը պետք է զսպի իր ագրեսիան եւ ամբիցիաները»:

Անդրադառնալով արցախյան զորահանդեսին՝ Դավիթ Ջամալյանը խոսեց Արցախի պաշտպանության բանակի մի շարք առանձնահատկություններից. այն կարողանում է պասիվ պաշտպանվողի կարգավիճակից դուրս գալ եւ հիմնական գործողությունները տեղափոխել թշնամու դաշտ: Փորձագետը նշեց, որ բանակաշինության գլխավոր ձեռքբերում է համարվում զումարտակների եւ գնդերի հրամանատարական կազմը. «Նրանք երիտասարդ են, համարձակ, 16-17 տարեկանից եղել են պատերազմի դաշտում, հետեւաբար, նրանց վրա կարելի է հույս դնել: Ինչ վերաբերում է վաշտերին եւ դասակներին, ապա սպայական անձնակազմի յուրաքանչյուր ներկայացուցիչ կերտում է մարտական կյանքի իր փոքրիկ պատմությունը, ինչը նպաստում է հակառակորդի ագրեսիան զսպելուն»:

Խոսելով Ադրբեջանում կայանալիք «Եվրատեսիլ 2012» մրցույթից, Ջամալյանը ասաց, որ յուրաքանչյուր այդպիսի միջոցառման դեպքում Ադրբեջանը փորձում է այն օգտագործել որպես քարոզչության միջոց՝ ագրեսիայի դրդելով Հայաստանին:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

VIVACELL MTS ԷՔԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

## Նախատեսվում է «Արարատ 73»-ԽՍՀՄ վետերանների ֆուտբոլային հանդիպում

Հունիսի 20-ին լրանում է «Արարատ 73» լեգենդար թիմի եւ նախկին ԽՍՀՄ հավաքականի հարձակվող Էդուարդ Մարգարովի ծննդյան 70-ամյակը: Այդ առիթով, անշուշտ, կկազմակերպվեն հոբելյանական հանդիսություններ, որոնց սպասվում է բազմաթիվ հյուրերի մասնակցություն՝ Մոսկվայից, Կիեւից եւ Թբիլիսիից: Երեւան կժամանեն անվանի ֆուտբոլիստներ, որոնց հետ ԽՍՀՄ հավաքականի կազմում հանդես է եկել Մարգարովը եւ որոնց դեմ «Արարատ» թիմում նա պայքարել է Խորհրդային Միության առաջնություններում եւ ԽՍՀՄ գավաթի խաղարկություններում:

Ակնկալվում է, որ այդ օրերին Երեւանում «Արարատի» եւ ԽՍՀՄ հավաքականի վետերան ֆուտբոլիստների միջեւ ընկերական հանդիպում կանցկացվի: Ընդ որում՝ հյուրերի թիմն ամենայն հավանականությամբ կգլխավորի լեգենդար մարզիչ Նիկիտա Սիմոնյանը:

Aravot.am-ը Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի փոխնախագահ Աշոտ Մանուկյանից հետաքրքրվեց, որ եթե ԽՍՀՄ վետերանների հավաքականը կազմավորվի եւ ժամանի Հայաստան, խաղը որտե՞ղ կկայանա: «Վազգեն Սարգսյանի անվան «Հանրապետական» մարզադաշտում, քանի որ «Հրազդանում» այդ ժամանակ հիմնանորոգման աշխատանքները դեռ ընթացքի մեջ կլինեն»,- պատասխանեց Ա. Մանուկյանը:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

# Մայիսի 6-ին ժողովուրդը կորցրեց իր իշխանությունը

Մեր երկիրը իրավունքի երկիր չէ, իսկ «Հավատանք, որ փոխենք» պատգամը քարոզողների խոսքի եւ գործի մեջ միասնություն չկա, որի պատճառով մայիսի 6-ի ԱԺ ընտրությունների կանոնները խախտվեցին: Այդ ընտրությունների առնչությամբ փիլիսոփայության գիտությունների դոկտոր, սոցիոլոգիայի պրոֆեսոր Լյուդմիլա Հարությունյանը նկատել է, որ ժողովրդին արդեն զգել են, ժողովուրդն այս ընտրություններով վերջնականապես կորցրեց իր իշխանությունը:

Միտքը վերաբերում է երկրում տիրող անարխիային, իսկ եթե երեւույթը գնահատենք իրավական հարթությամբ, նշանակում է ժողովրդից զավթել են իշխանությունը, եւ այդ հարաբերությունը պաշտպանող սահմանադրական նորմը (2-րդ հոդված) զրո է դարձել: Ամբողջ խնդիրը կայանում է նրանում, որ ավելի քան 10 տարի է՝ համապետական (նախագահական եւ ԱԺ) ընտրությունների պրոցեսում այդ ծանր հանցագործությունը կրկնվում է եւ նկատելի է, որ հանցավոր գործողությունները ղեկավարում է ռեժիմը, իսկ ծրագրված նպատակը իրականացվում է հանցավոր համագործակցության միջոցով:



Հանցավոր համագործակցությունը (Քրեական օրենսգրքի 223 հոդված) իրենից ներկայացնում է միասնական ղեկավարմամբ գործող կառուցվածքային միավորում կամ հանցավոր կազմակերպություն, որի անդամները համախմբվում են համատեղ ծանր եւ առանձնապես ծանր հանցագործություններ կատարելու նպատակով՝ ուղղակի կամ անուղղակի դրամական կամ նյութական բարիք ստանալու համար: Այդ հանցագործության կազմի հատկանիշներից են կազմակերպվածությունը (ներքին կանոնակարգվածությունը), կառուցվածքայնությունը (կազմում հիերարխիկ կառույցների եւ հանցավոր խմբավորումների առկայությունը), համախմբվածությունը (կազմակերպության ղեկավարների, կազմակերպիչների ու մասնակիցների մոտ ծանր հանցագործություն կատարելու միասնական կանխամտածվածությունը) եւ հատուկ նպատակը:

Հանցագործության պատասխանատվությունը դիֆերենցված է հանցանքը կատարող անձի մասնակցության աստիճանից եւ բնույթից, ըստ որում՝ նորմի առաջին մասը պատասխանատվություն է նախատեսում հանցավոր համագործակցությունը ստեղծելու եւ ղեկավարելու համար, երկրորդ մասը՝ հանցագործությանը մասնակցելու, իսկ 3-րդ մասը՝ եթե այդ արարքները կատարվել են պաշտոնական դիրքը օգտագործելով (պատիժ է նախատեսված, համապատասխանաբար՝ 8-12, 6-12, 10-15 տարի ժամկետով ազատազրկում):

Նկատենք, որ երբ քաղաքական ուժերը՝ ՀԱԿ-ը, ՀՅԴ-ն կամ Վարդան Օսկանյանը հայտարարում են, թե ընտրողների թվի մասին կանխահայտորեն սխալ տեղեկություններ է հրապարակվել, ընտրողների ցուցակում ընտրողների թիվը մի քանի հարյուր հազարով ուռճացվել է, ընտրությունների պրոցեսում ընտրողներին զանգվածաբար կաշառք են բաժանել, բռնություններ է գործադրվել, կամ մարտի 1-ին տասը մարդու կյանքից զրկել են, խոսքը գնում է վերեւում թվարկված շարժիչ ուժերով եւ հատկանիշներով օժտված գործող հանցավոր համագործակցության կամ հանցավոր կազմակերպության եւ նրա բազմաբնույթ հանցագործությունների մասին: Տրամաբանական հարց է ծագում. քաղաքական ուժերի կամ լրատվության միջոցների հաղորդումների առնչությամբ, ինչը առիթ է քրեական գործ հարուցելու համար, քրեական հետապնդում իրականացնող մարմինները ինչու չեն հետաքննություն սկսում (եթե մայիսի 6-ին Ֆրանսիայում անցկացված նախագահական ընտրությունների պրոցեսում Ֆրանսուա Օլանդի սոցիալիստական կուսակցությունը ընտրողներին կաշառեր կամ ֆիլատրոպիա՝ կյանքի աղետի ենթարկվածներին եւ թշվառներին բարեգործություն անելը, ապա Օլանդը եւ կուսակիցները բանտում կհայտնվեին):

Իմ կարծիքով, քաղաքական ուժերի հաղորդումները կարող են ստուգվել միայն քրեական գործի քննության շրջանակներում, ըստ որում՝ պարզաբանման ենթակա են հետեւյալ հարցերը.

ա) Մայիսի 6-ի ընտրությունների նախօրեին ընտրողներին զանգվածաբար 10.000-20.000 դրամ բաժանված դրամը (ընտրակաշառք), ինչը մեկնարկվում է 25 մլն ամերիկյան դոլարին համարժեք (Հրանտ Բագրատյանի հայտարարությունը), ի՞նչ գործառույթից է առաջացել եւ ո՞ր կառույցն է ծրագրել եւ ուղղորդել կաշառքը բաժանելու մեխանիզմը:

բ) Մայիսի 6-ի ընտրությունների քվեարկության պրոցեսում Ընտրական օրենսգրքի պահանջների խախտումը (անձնագրերի դրոշմակնքման կարգը) դիտավորյա՞լ արարք է, թե՞ հանցավոր ինքնավստահություն կամ անփութություն:

գ) Ընտրելու իրավունք չունեցող քանի՞ քաղաքացի, ինչպես նաեւ՝ հանգուցյալ է ընդգրկվել ընտրական ցուցակներում եւ քվեարկության օրը նրանց անձնագրային տվյալները գրանցվե՞լ են ընտրական ցուցակում, թե՞ ոչ:

Հիշյալ արարքները կատարվել են տեսանելի, բացահայտումն էլ հասարակ բան է, մինչդեռ հանցավոր հիերարխիան (պաշտոնակարգումը) չարիք է բոլորիս համար եւ սպառնում է երկրի անվտանգությանը:

ԱՐԱՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ
իրավաբան, Մոսկվա

# DIY ակումբում Աթաթուրքի նկարն է կախված եղել

DIY ակումբի հրկիզումից հետո հ/կ-ների մի մասը բացասական դիրքորոշում հայտնեց դեպքի վերաբերյալ, թե արվածը ռասիստական, անգամ՝ ֆաշիստական դրսեւորում ունի: Մամուլի որոշ հրապարակումներում քննադատության արժանացավ արդեն ազատ արձակված երիտասարդներին վերագրվող արարքը:

«Նախնյաց Հետքերով» հ/կ նախագահ Արման Մխիթարյանը Aravot.am-ի հետ զրույցում նշեց, որ իրենց ծանոթ չեն ակումբի հրկիզման մեջ մեղադրվող երիտասարդները, միեւնույն ժամանակ փաստեց, որ դեպքից ժամեր չանցած, որոշ մտավորականների կողմից քարոզ սկսվեց ազգային արժեքները դավանող եւ պահպանող մարդկանց ու խմբերի դեմ: «Ոչ մեկ իրավունք չունի այդ տղաներին հանցագործ կամ ֆաշիստ անվանել, ինչպես նաեւ՝ հասարակության մեջ բացասական կարծիք ձեւավորել, քանի դեռ այդ արարքի առթիվ չի կայացվել դատարանի վճիռը: Անմեղության կանխավարկածը դեռ ոչ ոք չեղյալ չի համարել: Այսօր ազգայնական բառի իմաստը դիտավորյալ խեղաթյուրվում է՝ այն նույնացնելով ազգայնամոլության եւ այլատյացության հետ: Ազգայնականը նա է, ով իր մեջ կրելով ժամանակի ընթացքում բյուրեղացած ազգային սրբությունները ու արժեքները, անհաշտ պայքարի է ելնում դրանց նկատմամբ ցանկացած ոտնձգության փորձի դեմ: Լինել ազգայնական՝ չի նշանակում ատել այլ ազգերին եւ դրանց մշակույթը»,- ասաց Մխիթարյանը: Ըստ նրա՝ միասեռականության պաշտպանները քարոզում են աշխարհի քաղաքացի լինելու գաղափարը՝ պատճառաբանելով, որ եթե ազգությունները ձուլվեն, չեն լինի նաեւ պատերազմներ: Մինչդեռ Արման Մխիթարյանի խոսքով, պատերազմների պատճառը ոչ թե էթնիկ տարբերություններն է, այլ որեւէ խմբավորման՝ մյուսի ունեցվածքին տիրելու ցանկությունը: Հիշելով DIY-ում ժամանակին Աթաթուրքի նկարի կախված լինելու մասին՝



«Նախնյաց Հետքերովի» նախագահը նշեց, որ այդ կերպ ակումբի տերերը անարգում են անմեղ նահատակների հիշատակը. «Դեռ մեկ դար էլ չանցած՝ մոռանում են ցեղասպանության արհավիրքները եւ հավասարություն դնում ցեղասպանություն իրագործած թուրքի ու նահատակված հայի միջեւ: Համացանցում տեղադրված տեսանյութերից պարզ է դառնում, որ ակումբի տերը լեսբուհի է: Մենք գործ չունենք իր սեռական կյանքի հետ, բայց երբ փորձ է արվում այն ի ցույց դնել հասարակությանը, դա վերածվում է քարոզի, ինչի արդյունքում այլասերվում է հատկապես երիտասարդությունը: Նրանք քանիցս մասնակցել են Թուրքիայում կազմակերպված գեյ- շքերթներին, ինչը եւ քարոզի մի ձեւ է: Հիմա ի՞նչ՝ դասական կողմնորոշում ունեցողնե՞րն էլ շքերթ անեն»: Արման Մխիթարյանի խոսքով՝ միասեռականներին սատարող կազմակերպությունները օգտվում են դրամաշնորհներ տրամադրող արտասահմանյան ընկերություններից, ինչը միտված է մեզանում, այսպես կոչված, արեւմտյան արժեքներ տարածելուն. «Դրանցից մեկը ֆեմինիզմն է՝ առողջ ընտանիքի թիվ 1 թշնամին, քանզի այն, իբր թե հռչակելով կանանց եւ տղամարդկանց հավասարություն, իրականում հակադրություն է ստեղծում նրանց մեջ: Մեր ազգային արժեհամակարգում ընտանիքի կինը միշտ էլ ունեցել է բարձր պատիվ ու հարգանք: Նրանց պետք է ոչ թե հակադրել, այլ համադրել, քանզի մեկը լրացնում է մյուսին»: Երիտասարդի խոսքով. «Հիմա մեզ ոչնչացնում են մշակութային ձեւով՝ խեղելով հայ մարդու դիմագիծը»:

«Հայրունի պահանջատերերի համախմբում» նախաձեռնության անդամ Արթուր Գրիգորյանը նշում է, որ ականատես է եղել Կոմայգու դիմաց հավաքված տրանսսեքսուալների սադրանքներին, երբ վերջիններս բացահայտ հարձակվում էին անցորդների վրա՝ դրդելով նրանց հակազդեցության, քանզի գիտեին, որ այդ տարածքը գտնվում է քաղաքապետարանի եւ ֆրանսիական դեսպանատան տեսախցիկների տեսանելիության տակ. «Ասում են՝ դե կարա՞ս՝ խփիր, մենք պաշտպանված ենք եվրակառույցների կողմից, եւ ոչ մեկդ մեզ ոչինչ չի կարող անել»: Համահարթեցման քաղաքականությանը հաճախ չենք կարողանում դիմակայել թերի օրենքների պատճառով: Եվրոպական շատ երկրներ նույնպես դեմ են արեւմուտքում ծնունդ առած համահարթեցման՝ գլոբալիզացիայի գաղափարին, քանզի դա ոչնչացնում է ազգային դիմագիծը: Իսկ մենք դեռ իներցիայի տակ, գոռում ենք «առաջ, դեպի Եվրոպա»,- ասաց Ա. Գրիգորյանը՝ հավելելով, որ Եվրոպական օրինագծերը պարտադրվում են փաթեթների տեսքով, այնինչ՝ նրանցում կան դրույթներ, որոնք հաստատ հայի համար չեն:

Ա. Գրիգորյանի խոսքով, արեւմտյան քարոզը կյանքի նկատմամբ սպառողական մոտեցման դրսեւորում է ենթադրում. «Ապրիր հաճույքներիդ համար»: Նրա ասելով. «Ծոմակը՝ ակումբի տերը, ինքն էլ ելույթներում նշում է, որ ապրում է հաճույքի համար: Պետք է ոչ միայն դրոշ դարձրած ծածանել իրավունքների մասին դրույթները, այլ տեր լինել ազգի ու հասարակության առջեւ ունեցած պարտավորություններին»:

Նշենք, որ Ծոմակի ռոք խումբը ժամանակին կոչվում էր «Ինցեստ», ինչը նշանակում է արյունապղծություն, ավելի ուշ այն վերանվանվեց «Պինցետ»:

Խնդրի շուրջ Սուրբ Հովհաննես եկեղեցու հոգեւոր սպասավոր տեր Շմավոն քահանա Ղեւոնդյանը նշեց, որ Առաքելական եկեղեցին միասեռականության շուրջ պաշտոնական դիրքորոշում չի արտահայտել, բայց Աստվածաշունչը հստակ ասում է, որ դա մեղք է. «Դրա պատճառով կործանվեցին Սոդոմը եւ Գոմորը: Դա անբնական եւ մերժելի երեւույթ է եւ որոշ մարդկանց հնարավորություն է տալիս, ասենք, խուսափել զինվորական ծառայությունից»:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ